ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

18 ՄԱՅԻՍԻ 2022 թ.
№ 7 (1086)

100

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

1922 թ. հիմնադրված Մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը հիմնադրվել է 1930 թվականին, 1965 թ. առանձնացել է բանասիրական ֆակուլտետը: Որոշ ժամանակ այն անվանվել է հայոց լեզվի (մայրենի լեզվի) և գրականության ֆակուլտետ:

Հիմնադրման օրից հանրապետության, ինչպես նաև սփյուռքի դպրոցների հայոց լեզվի և գրականության ուսուցիչների շուրջ 90 տոկոսը եղել են բանասիրական ֆակուլտետի շրջանավարտներ:

Ֆակուլտետը հայտնի է նաև մանկավարժության, գիտության, արվեստի և գրականության անվանի դեմքերով՝ Հրանտ Մաթևոսյան, Ռազմիկ Դավոյան, Արամայիս Սահակյան, Մետաքսե, Արմեն Մարտիրոսյան, Արմեն Շեկոյան, Սուրեն Մուրադյան, Լիպարիտ Սարգսյան, Ֆելիքս Մելոյան և այլք:

Ֆակուլտետում դասավանդել են նշանավոր լեզվաբաններ Գ. Ջահուկյանը, Ա. Ղարիբյանը, Ա. Աբրահամյանը և ուրիշներ: Երկար տարիներ ֆակուլտետում աշխատել են պրոֆեսորներ Ա. Առաքելյանը, Ա. Բաբայանը, Վ. Պարտիզունին, Վ. Քոսյանը, Բ. Վերդյանը, Պ. Բեդիրյանը և ուրիշներ:

Այժմ ֆակուլտետում դասավանդում են ԳԱԱ ակադեմիկոսներ, գիտության դոկտոր, պրոֆեսորներ, թեկնածու, դոցենտներ:

Բանասիրական ֆակուլտետում մշտապես եղել են հանդիպումներ մեծերի հետ՝ աշխարհահռչակ դերասան Վ. Փափազյան, նշանավոր գրողներ Պ. Սևակ, Հ. Շիրազ, Ռ. Դավոյան, Վ. Պետրոսյան, Ա. Կիրակոսյան, Ն. Ադալյան, Ռ. Հովսեփյան և ուրիշներ:

Հաճախ են պետական մրցանակի արժանացած գրողները հյուրընկալվել բանասիրական ֆակուլտետում:

Տարիներ ի վեր ֆակուլտետի ուսանողները մեկնել են Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ, մասնակցել «Ամառային դպրոց» ծրագրին:

Բանահյուսական պրակտիկայի ժամանակ ուսանողները դասախոսների հետ եղել են Հայաստանի տարբեր շրջաններում, գրառել ժողովրդական խոսվածքներ:

Ֆակուլտետի ամբիոնները տարաբնույթ միջոցառումներ են կազմակերպել Թբիլիսիի Թումանյանի տանը, Դսեղում, Գևորգյան ճեմարանում, Օրբելի եղբայրների թանգարանում, Երևանում, Գանձասարում և այլուր:

Մանկավարժական համալսարանի 100-ամյակի շրջանակներում հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը մարտ ամսին կազմակերպել է «Հայոց գրերը և հայ դպրոցը» միջազգային հայերենագիտական գիտաժողովը, որին մասնակցել են նաև Երուսաղեմի հայոց պատրիարքության, ԱՄՆ-ի արևմտյան թեմի, Եգիպտոսի հայոց թեմի, Լեյդենի համալսարանի ներկայացուցիչները:

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետը եղել և մնում է հայագիտական կարևորագույն կենտրոններից մեկը ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում: Այսօր էլ ֆակուլտետն աչքի է ընկնում հանրապետության լավագույն մանկավարժներով: Ֆակուլտետի ուսանողների գերակշիռ մասը ակտիվորեն մասնակցում է ֆակուլտետում կազմակերպվող միջոցառումներին, ուսանողական կյանքին, զինվում գիտելիքներով, հմտություններով և կարողություններով՝ հետագայում դրանք հանրությանը ծառայեցնելու նպատակով: Ֆակուլտետի ուսանողները մեծապես ներգրավված են Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, համատեղ կազմակերպում են տարաբնույթ միջոցառումներ՝ բանավեճեր, գիտական, էկոլոգիական միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր: Ուսանողները զերծ չեն նաև միջբուհական շփումներից. նրանք ակտիվորեն մասնակցում են հանրապետության այլ բուհերում և Արցախում կազմակերպվող գիտական միջոցառումներին: Բանասիրական ֆակուլտետի ուսանողների առօրյայի անբաժանելի մասն են տարբեր թանգարաններ, ցուցահանդեսներ այցելությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Ապրիլի 29-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ Գիտական խորհրդի նիստը: Օրակարգի հարցերի քննարկմանն անցնելուց առաջ նիստը վարող ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց հոբելյարներին և մաղթեց արդյունավետ աշխատանք:

Օրակարգի առաջին հարցով լսեցին Օտար լեզուների, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետների դեկաններ-ի ընտրության մասին հարցը:

Օտար լեզուների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար դիմել էին ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սրբուհի Լուլուկյանը և ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Միքայելյանը:

Սրբուհի Լուլուկյանը հանգամանորեն ներկայացրեց իր պաշտոնավարման տարիների գործունեությունն ամփոփող հաշվետվությունը, ինչպես նաև առաջիկա տարիների աշխատանքի տեսլականը:

Տիգրան Միքայելյանը համապարփակ և համակարգված ներկայացրեց իր գործունեության ծրագիրը՝ միասին զարգանալուն միտված շեշտադրումներով:

Ներկաները լսեցին նաև Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի թափուր պաշտոնի համար դիմած ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Էդգար Հովհաննիսյանի հարցը, ապա նրա հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին, ինչպես նաև առաջիկա գործունեության ընդհանուր տեսլականը:

Գիտական խորհրդի անդամները լսեցին թանգարանագիտության, գրադարանավարության և մատենագիտության, նաև հեռուստառադիոլրագրության ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար դիմած հավակնորդների՝ Ամատունի Վիրաբյանի և Լևոն Գալստյանի ընտրության մասին:

Սրբուհի Գևորգյանը փակ գաղտնի քվեարկության դրեց թափուր պաշտոնների հավակնորդների ընտրության հարցը:

Այնուհետև պրոռեկտոր, գիտական քարտուղար Մարիամ Իսպիրյանը ներկայացրեց գիտական կոչումների ներկայացվող թեկնածուների հարցը. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Աշոտ Գալստյանը և լոգոպեդիայի և թերապիայի ամբիոնի վարիչ Գոհար Հովյանը ներկայացվեցին պրոֆեսորի, ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Այուցց Բելլան, մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Արմինե Դալլաքյանը, լոգոպեդիայի և թերապիայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Էմիլյա Թադևոսյանը, մանկավարժության ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Նաիրա Մարտիրոսյանը՝ դոցենտի կոչումների:

Ներկաները լսեցին գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի զեկուցումը գրադարանի գործունեության մասին, այնուհետև ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը հանդես եկավ ուսանողական խորհրդի գործունեության մասին զեկուցումով:

Գիտական խորհուրդը որոշեց գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցի հաղորդումը 2021-2022 թթ. գիտական գրադարանի գործունեության մասին ընդունել ի գիտություն:

Համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության մասին հաղորդումը ևս ընդունեցին ի գիտություն՝ ուսանողական խորհրդի ուշադրությունը հրավիրելով մի շարք հարցերի վրա:

Ընթացիկ հարցերում Մարիամ Իսպիրյանը հաստատման ներկայացրեց ատենախոսությունների թեմաների հաստատման և գրքերի հրատարակության երաշխավորման հարցերը:

ՀՊՄՀ պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրոսի հեռակա կրթական ծրագրի մասնագիրը, ուսումնական պլանը և ուսման վարձի նախատեսված չափը՝ համաձայն հավելվածի:

Գիտական խորհրդի անդամները հաստատեցին «Մաթեմատիկան դպրոցում» գիտամեթոդական պարբերականը՝ որպես Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ենթակայության հրատարակվող ամսագիր:

Հաստատեցին ուսումնական աշխատանքների ծավալների հաշվարկի չափորոշչի փոփոխված տարբերակը 2022-2023 ուստարվանից սկսած՝ ուժը կորցած ճանաչելով նախորդը:

Հաստատեցին նաև «Ալեն Մարգարյան» բարեգործական ՀԿ-ի ֆինանսավորմամբ համանուն կրթաթոշակ՝ համաձայն կազմակերպության կողմից ներկայացված չափորոշիչների:

Նիստի վերջում հաշվիչ հանձնաժողովը ներկայացրեց ընտրությունների արդյունքները, ըստ որի Օտար լեզուների ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրվեց Տիգրան Միքայելյանը, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ Էդգար Հովհաննիսյանը, թանգարանագիտության, գրադարանավարության և մատենագիտությանիոնի վարիչի պաշտոնում՝ Ամատունի Վիրաբյանը, իսկ հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչի պաշտոնում՝ Լևոն Գալստյանը:

Գիտխորհրդի անդամների մեծամասնությունն իր ձայնը տվեց գիտական կոչումների ներկայացված թեկնածուների օգտին:

ԼՐԱՀՈՍ

ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԻԾ

Երևանի №104 հիմնական դպրոցը մայիսի 5-ին մեծ շուքով նշեց հայ նոր գրականության հիմնադիր, լուսավորիչ, գրող, մանկավարժ Խաչատուր Աբովյանի անունը կրող Մանկավարժական համալսարանի 100-ամյակը:

Գրական-երաժշտական միջոցառումը կազմակերպել էին դպրոցի ուսուցիչները, ովքեր ավարտել են Մանկավարժական համալսարանը՝ դպրոցի տնօրեն, ՀՊՄՀ շրջանավարտ, այսօր արդեն՝ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Նաիրա Մարտիրոսյանի գլխավորությամբ: Մանկավարժական բուհի շրջանավարտներն իրենց սաների՝ 3-4-րդ դասարանների աշակերտների հետ ներկայացրին նախագծային աշխատանք՝ «Հայ դպրոցի և մանկավարժական մտքի երախտավորները Մաշտոցից մինչև մեր օրերը» թեմայով:

Միջոցառումն սկսեց դպրոցի երաժշտության ուսուցիչ, Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ Ռ. Ավագյանը: Այնուհետև դպրոցի ուսուցիչները տնօրեն Ն. Մարտիրոսյանի հետ բեմահարթակից ողջունեցին ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմին, ուսուցիչներին, հյուրերին: Նրանք արժևորեցին դպրոցը, բուհը, հայրենիքը, կրթությունը, դաստիարակությունը:

Բեմահարթակը տրամադրվեց 3-րդ և 4-րդ

դասարանների աշակերտներին: 1-ին խումբը ներկայացրեց «Դպրոցը և հայ մանկավարժական միտքը Մաշտոցից մինչև Գ. Տաթևացի» թեման, 2-րդ խումբը՝ Խ. Աբովյանի կյանքը, մանկավարժական գործունեությունը, 3-րդը՝ Մանկավարժական համալսարանի ստեղծման պատմությունը, 4-րդ խումբն անդրադարձավ «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի պատմությանը: 5-րդ խումբը վաստակաշատ ուսուցչուհի Լ. Տոնապետյանի անմիջական մասնակցությամբ ներկայացրեց № 104 դպրոցի պատմությունը: Միջոցառումն իրենց երաժշտական կատարումով գեղեցկացրեց դպրոցի և Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ Վարսենիկ Մուրադյանի և նրա որդու ելույթը:

Միջոցառումը եզրափակվեց «Հայաստան» պարային համույթի «Արցախ» պարային ելույթով, որի գեղարվեստական ղեկավար Մարիա Հակոբյանը դարձյալ № 104 դպրոցի և Մանկավարժական համալսարանի շրջանավարտ է, դպրոցի «Ազգային երգ ու պար» առարկայի ուսուցիչը:

Շնորհավորանքի և շնորհակալանքի խոսքով հանդես եկավ ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր Աիդա Թոփուզյանը: Նա արժևորեց կազմակերպիչների աշխատանքը և իր երախտագիտությունը հայտնեց դպրոց-բուհ կապի սերտացման համար: Պրոֆեսորը խոստացավ, որ աշակերտների նախագծային աշխատանքի արդյունքները՝ բուկլետները, իրենց արժանի տեղը կգտնեն ՀՊՄՀ թանգարանում, և հույս հայտնեց, որ ապագայում աշակերտները կավելացնեն այդ արժեքները:

Համալսարանի Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր Ջուլիետա Գյուլամիրյանը հրաշալի միջոցառման համար շնորհակալության խոսք հղեց ուսուցիչներին և տնօրենությանը:

Միջոցառումը հուզիչ էր, հույզերով ու լույսերով լի: Այն շնչում էր հայրենասիրությամբ և սիրով. սեր դեպի դպրոցը, ուսուցիչը, աշակերտը...

Ու մեծ սիրով մենք ասում ենք. «Մեր դռները բաց են: Արի՜ 104 դպրոց: Մենք սպասում ենք»:

№104 դպրոցի տնօրենություն

Հարցազրույց բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր Աշոտ Գալստյանի հետ:

«Մեր ուսանողները պետք է ունենան մանկավարժի և մարդու վառ նկարագիր: Աբովյանական նկարագիր....»

-Պարոն Գալստյան, ի՞նչ է Ձեզ համար բանասիրական ֆակուլտետը:

-Բանասիրական ֆակուլտետն իմ երկրորդ տունն է: Ես ամեն աշխատանքային օր մեծագույն հաճույքով եմ գալիս աշխատավայր: Մի նավի մեջ ենք, որտեղ ապրում են բանիմաց գործընկերներ և բարեջան ուսանողներ: Հետաքրքիր է անցնում մեր առօրյան: Մանկավարժական վարպետություն, դասախոսություններ, ռեկտորատի և ամբիոնի նիստեր, տարաբնույթ միջոցառումներ...

Դեկանի աշխատանքը միայն կաբինետային և լսարանային չէ: Մենք հաճախ ենք լինում հանրապետության տարբեր դպրոցներում, կրթական կենտրոններում: Այցելություններն այս տարի կարծեք կրկնապատկվել են: Մեր ռեկտորը տարին հայտարարել է «365 օր դպրոցում ուսուցիչների և աշակերտի կողքին»: «Ֆակուլտետը՝ դպրոցին» նշանաբանը մեր այցեքարտն է:

-Ձեր ֆակուլտետում դասախոսների միջին տարիքն այնքան էլ ցածր չէ: Ինչպե՞ս եք իրականացնում երիտասարդներին ճանապարհ տալու գործընթացը:

-Ես կարծում եմ, որ մեր մասնագիտության գծով լավագույնը դառնալու համար պիտի շատ աշխատել: Իսկ դա տարիներ է պահանջում: Տքնանք և նկարագրի կերտում: Նաև անբասիր կենսագրություն և հեղինակության ստեղծում: Ես չեմ կարծում, որ 35-40 տարեկանը կարող է լինել այս մասնագիտության առաջամարտիկը: Ես ունեմ ամբիոնի վարիչներ, որոնք հեղինակություններ են, և այդ ամենը նրանք ձեռք են բերել տարիների տքնաջան և անձանձիր գործունեության ընթացքում:

Ինչ վերաբերում է երտասարդ կադրերին, մենք հետամուտ ենք և շահագրգիռ այս հարցում: Այսօր ամբիոններում պատրաստվում են երիտասարդ հայցորդներ և ասպիրանտներ, որոնք մոտ ապագայում կհամալրեն դասախոսական շարքերը: Մենք վստահում ենք երիտասարդներին: Դեկանատում աշխատում են ֆակուլտետի երիտասարդ շրջանավարտները:

Ավագ սերնդի դասախոսներն իրենց փորձը սիրով փոխանցում են երիտասարդներին:

-Ովքե՞ր են Ձեր ֆակուլտետի դասախոսները և ինչպե՞ս են աշխատում:

-Ֆակուլտետում աշխատում է պրոֆեսորադասախոսական ամուր թիմ: Մեր երեք ամբիոններում աշխատում է 34 դասախոս: Մենք չպաշտպանած դասախոս չունենք: Գիտության դոկտորներ են և գիտության թեկնածուներ: Նրանց գիտական արտադրանքը նույնպես գովելի է: Զարմանալի է, բայց փաստ՝ բոլորն էլ գերպարտաճանաչ դասախոսներ են: Մեզ մոտ ուշացման դեպքեր գրեթե չեն լինում: Գոհ ենք նաև այլ ամբիոններից եկած դասախոսներից: Մեր ուսանողներն ընտրովի առարկաներից առանձնացնում են մանկավարժությունը և փիլիսոփայությունը: Այս առարկաների մասնագետները կարծես մերվել են մեր թիմին: Նրանք արհեստավարժ մանկավարժներ են, շատ գիտակ են և հետաքրքիր են անցկացնում դասաժամերը:

-Ո՞րն է Ձեր աշխատանքի հաջողության գաղտնիքը:

-Նվիրում և պարտաճանաչություն: Սա է բանասիրականի նշանաբանը: Շատ ենք աշխատում: Փորձում ենք հասցնել բոլոր հանձնարարականները: Ուսանողին դիտում ենք որպես կրտսեր գործընկեր: Նրան վստահում ենք և հավատում:

Այսօրվա ուսանողը տարբերվում է և՛ գործելակերպով, և՛ աշխարհայացքով: Փորձում ենք հասկանալ նրան, օգնել, աջակցել: Գիտե՞ք, ունենում ենք նաև դժվարություններ: Տարբեր ընտանիքներից և դպրոցներից եկած երիտասարդներ են: Յուրաքանչյուրի հետ անհատական մոտեցում է անհրաժեշտ: Կարծես մեզ մոտ հաջողվում է:

-Ի՞նչ աշխատանքներ են իրականացվում ուսանողների հետ լսարանից դուրս:

-Մենք մեծ տեղ ենք տալիս կիրառական պրակտիկային: Դպրոցներ մեկնելուց առաջ ֆակուլտետում տեղի է ունենում նախապատրաստական կոնֆերանս: Նրանց հորդորում ենք, թե ինչ պահվածք և գործելակերպ պիտի ունենան կրթօջախներում: Անդրադառնում ենք ուսանողի հագուստին, մանկավարժական տակտին, հոգեբանական իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողություններին, մասնագիտական հմտություններին: Նրանք գիտեն, որ իրենց դիտում են մանկավարժական հանրությունը, կրթության փորձագետները, ծնողները: Պետք է գործել և արարել չափի ու պատասխանատվության տիրույթում:

Ֆակուլտետում գործում է գրականասերների ակումբ: Դասերից հետո ուսանողները մասնակցում են տարբեր միջոցառումների: Վերջին օրերի Համո Սահյանին նվիրված միջոցառումը լավագույններից էր:

Դպրոցներում իրազեկման աշխատանքներ կատարելիս մեզ հետ տանում ենք նաև ուսանողներին: Արթիկի տարածաշրջանում մեզ հետ էին նաև այդ բնակավայրերի ուսանողները, որոնք սովորում են մեզ մոտ: Նրանք են աշակերտներին ներկայացնում Մանկավարժական համալսարանը, նրա առավելությունները: Նրանք են աշակերտական համայնքին փոխանցում իրենց տպավորությունները:

Բաց դռների օրերի շրջանակներում հաճախ ենք ֆակուլտետում հյուրընկալում տարբեր դպրոցների աշակերտներին և ուսուցիչներին: Մինչ նրանց գալը մենք ֆակուլտետում նախապատրաստվում ենք. ուսումնասիրում ենք նաև նրանց կարիքները: Սա շատ կարևոր է. ի՞նչ հետաքրքիր միջոցառումներ, ֆլեշ-մոբեր, վարպետության դասեր, օլիպիադաներ կարելի է ներկայացնել մեր հյուրերին: Սրանք պլանավորվում են մեր թիմի կողմից: Առաջարկություններ է ներկայացնում նաև ուսխորհուրդը:

-Ինչպիսի՞ն կցանկայիք տեսնել Ձեր ֆակուլտետի ուսանողին:

-Նախ ուզում եմ, որ բանասիրական գան նաև տղաներ: Իհարկե, ունենք տղա ուսանողներ և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում: Բայց դրանց թիվը քիչ է: Բանակում ծառայող ուսանող ունենք: Սպասում ենք նրա վերադարձին:

Շատ հարթակներում մեր ուսանողները մրցում են այլ բուհերի ուսանողների հետ և առավելություններ արձանագրում բանասիրության և մանկավարժության բնագավառներում: Սա շատ գովելի է: Թերևս դա է պատճառը, որ այս տարի շատ դիմորդներ ունենք:

Ընդհանուր առմամբ, մենք գոհ ենք մեր ուսանողներից: Նրանք լավ ուսուցիչներ և լավ մայրեր ու հայրեր կդառնան:

Մեր հորդորն է նրանց՝ աշխատել գրադարաններում, շատ կարդալ, լավ պատրաստվել ամփոփիչ քննություններին: Նրանք պետք է ունենան մանկավարժի և մարդու վառ նկարագիր: Աբովյանական նկարագիր....

Հարցազրույցը վարեց
ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԸ



Հայ դասական գրող Հրանտ Մաթևոսյանը 1958-1963 թթ. սովորել է ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետում:

ԼՐԱՀՈՍ

ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆ

Կրթության և հոգեբանության ֆակուլտետի Հոգեբանության ամբիոնը մայիսի 12-ին անվանակոչեցին հոգեբանության երախտավոր, ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անունով: Համալսարանի գիտական խորհուրդը հաշվի առավ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ցանկությունը և որոշում ընդունեց ամբիոնը կոչել անվանի հոգեբանի անունով:

Ելույթ ունեցան բուհի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, դեկան Ռուզաննա Պետրոսյանը, Հոգեբանության ամբիոնի վարիչ Լևոն Սարգսյանը:

Լ. Սարգսյանը ներկայացրեց Մ. Մազմանյանի մեծ ավանդը Մանկավարժական համալսարանում հոգեբանական գիտության ձևավորման, զարգացման, հոգեբանության ամբիոնի, այնուհետև գիտահետազոտական լաբորատորիայի ձևավորման, հոգեբան մասնագետների պատրաստման, առհասարակ հոգեբանական գիտության կայացման գործում: Ամբիոնի վարիչը կարևորեց մարդկային վերաբերմունքի մասնագիտական ոլորտում մեծերին արժևորելու և նրանց ավանդն ու գործունեությունը շարունակելու աշխատանքը:

«Մեկդարյա գործունեություն իրականացրած բուհը համալրված է եղել տաղանդաշատ ականավոր գործիչներով, մանկավարժներով, հոգեբաններով, և առաջիններից մեկը Մկրտիչ Մազմանյանն է: Օրվա խորհուրդն է հետադարձ հայացքով արժևորել Մանկավարժականում իր դպրոցն ստեղծած և իր ձեռագրաբանությունը թողած հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի գործունեությունը և նրա անունով կոչել Հոգեբանության ամբիոնը»,-ասաց ռեկտորը: Նա հանգամանորեն ներկայացրեց ակադեմիկոսի անցած ճանապարհը՝ ընդգծելով հոգեբան գիտնականի մեծագույն ավանդը. հատկապես հայ հոգեբանական գրականության մեջ անգիտակցականի գործոնը կարևորելու և անգիտակցականի դրսևորման առանձնահատկությունները ստեղծագործական հոգեբանության ընդերքում դիտարկելու տեսությունը կապվում է հենց նրա անվան հետ»,-ասաց ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Մկրտիչ Մազմանյանը 1951 թվականից գործունեություն է ծավալել Մանկավարժականում, ապա 1957-ից հիմնել է Հայաստանում առաջին պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիան, որի հիմնական ուղղությունները եղել են տարիքային մանկավարժության զարգացման, հոգեբանության, ուսանողների հարմարման հիմնախնդիրները, որոնք այսօր էլ արդիական են:

Իր տպավորություններն ու հուշերը ներկայացրեց Հոգեբանության ամբիոնի դոցենտ Լյուսյա Քյուրքչյանը, ով 1971 թվականին Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական ինստիտուտի Հոգեբանության և մանկավարժության ամբիոնում եղել է ակադեմիկոս Մ. Մազմանյանի ասպիրանտը: Հանգամանքների բերումով ներկա է եղել ոլորտի առաջատար մասնագետների զրույցներին, որոնք վերաբերում էին հոգեբանության հիմնախնդիրներին:

«Բոլորը հիանում էին Մ. Մազմանյանի իմացությամբ. նրա հետաքրքրությունների ոլորտը շատ մեծ էր, չտեսնված գիտեր նաև պոեզիա, գրականություն: Հոգեբանության պրոբլեմների լաբորատորիայում լսել եմ ակադեմիկոսին, որը խոսում էր Ֆրեյդի մասին: Նրան հաճախ էին հրավիրում Թբիլիսի, Մոսկվա դասախոսություններ կարդալու: Իդեալական մարդ էր և ֆենոմենալ հիշողություն ուներ: Գիտնականներն ասում էին՝ նա ունիկալ անհատականություն է, պահպանեք նրան»,-ամփոփեց Լ. Քյուրքչյանը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՈՒՆԵՑԵԼ Է, ՈՒՆԻ ԵՎ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Խաչատուր Աբովյանի անունն է կրում հայկական պետական մանկավարժական համալսարանը: Այն արդեն 100 տարեկան է: Մայր բուհն ունի կարևոր ավանդույթներ, որոնց մեջ կարևորագույնը այն գիտակցումն է, որ Հայաստանի համար մեր համալսարանը պատրաստել, պատրաստում է և պետք է պատրաստի հիանալի մանկավարժներ՝ գիտության տարբեր գիտաճյուղերը դպրոցում ներկայացնելու համար:

Իր մեկդարյա գոյության ընթացքում բուհն ունեցել է դասախոսների նշանավոր դեմքեր և Հայաստանին է տվել ոչ միայն հմուտ ու առաջնակարգ ուսուցիչներ, այլև տարբեր գիտաճյուղերի ականավոր գիտնականներ, պետական գործիչներ, հայրենիքին իրենց կյանքը պատերազմական դաշտում նվիրած քաջորդիներ:

Ես այս բուհում եմ 17 տարեկանից և ընդունվել եմ ներքին այն մղումով, որ մանկավարժ լինելը ազգին ծառայելու յուրօրինակ կոչում է: Երբեք չընդհատվեց իմ և մայր բուհի կապը: Քանի որ Լենինյան թոշակառու էի, անմիջապես երաշխավորություն ստացա մասնակցելու ասպիրանտուրայի ընդունելության քննություններին և ընդունվելուց հետո մի քանի օր անց գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Արշալույս Բաբայանն ասաց, որ 4 տղաների հետ մեկնելու եմ Բաթում՝ գիտաժողովի, որպես հինգերորդ կուրսի ուսանողուհի, որովհետև զեկուցումը պետք է ռուսերեն լինի, իսկ ես ազատ տիրապետում էի ռուսերենին:

Ուսանողական հինգ տարիներն անցել են շատ հետաքրքիր: Մենք շատ նախաձեռնող էինք: Օրինակ, Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ» գրքի առաջին քննարկումը եղել է մեր բուհի մեծ դահլիճում, անցել անշլագով, զեկուցել ենք ոչ միայն մենք՝ բանասերներս, այլև ուրիշ ֆակուլտետների ուսանողներ: Նույն ձևով խիստ բազմամարդ անցավ Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի քննարկումը, որին ներկա էր աշխարհահռչակ Վահրամ Փափազյանը՝ Մեք Գրեգորի դերակատարը, եկել էին Բաբկեն Ներսիսյանը՝ Բեն Ալեքսանդրը, նաև Վարդուհի Վարդերեսյանը՝ Ջոնիի դերակատարը: Այդ ժամանակ բուհի ռեկտորն էր Վարդգես Համազասպյանը, որը մշտապես ներկա էր լինում ուսանողական միջոցառումներին: Հիշում եմ, թե որքան հաճելի էր, երբ Փափազյանը գրկեց ինձ և ասաց. «Մանչս, հիանալի ներկայացրիր Ջոնիին»: Մենք հրավիրել ենք Հովհաննես Շիրազին, Սիլվա Կապուտիկյանին, Համո Սահյանին, շատերին: Ամեն անգամ մեր հյուրերը բուհից հեռանում էին շատ տպավորված:

1963-ին բուհի մեծ դահլիճում Վարդգես Համազասպյանը կազմակերպել էր հանդիպում ֆրանսիացի մեծ հայագետ, հայ ժողովրդի իսկական բարեկամ Ֆրեդերիկ Ֆեյդիի հետ:

Ֆեյդին հիանալի հայերենով պատմեց, թե ինչպես է թարգմանում «Սասունցի Դավիթ» վիպերգը ֆրանսերենով:

Հիշում եմ պատմալեզվագրական ֆակուլտետի մեր կուրսը՝ բաղկացած 50 ուսանողներից. շատ ուսումնատենչ էինք: Հատկապես հիանալի էին սովորում տղաները, որոնք կուրսի կեսն էին կազմում: Ահա նրանց նախաձեռնությամբ ֆակուլտետի դեկանը՝ Արտաշես Պողոսյանը, մեր կուրսին բուհի միջոցներով 8 օրով ուղարկեց Թիֆլիս և Բաքու՝ այդ երկու երբեմնի հայաշատ քաղաքների մշակութային վայրերը տեսնելու:

Մեր կուրսին դասավանդել են առաջնակարգ դասախոսներ:

Առաջին կուրսի սեպտեմբերի 1-ի առաջին դասին կուրս եկավ Մորուս Հասրաթյանը՝ նշանավոր սայաթնովագետն ու հնագետը: Առաջին դասին նա մեզ բացատրեց, թե ինչպիսին պետք է լինի մանկավարժը, ինչպես պետք է ուսանողը պարապի և հասցնի յուրացնել անցնելիք առարկաները, հարցրեց, թե ով ինչ հակումներ, ձգտումներ ունի: Հատկապես նրան հետաքրքրեց՝ընդունված ուսանողները մայրաքաղաքից են, թե այլ քաղաքներից ու շրջաններից: Երբեք չեմ մոռանա նրա հետ առաջին հանդիպումը: Դեռ նոր էինք ընդունվել, երբ ողջ կուրսին ավտոբուսով տարան Կարմիր Բլուր, հետո Մատենադարան, Պատմության թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ:

Երբեք չեմ մոռանա Աշոտ Աբրահամյանի առաջին դասախոսությունը: Նա այնքան գեղեցիկ ու անթերի էր խոսում, որ հենց դրանով կապում էր ուսանողներին ոչ այնքան հեշտ առարկայի՝ «Լեզվաբանության ներածության» հետ: Իմաստուն ձևով բացատրում էր հայերենի հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ լինելը, խոսում եվրոպացի հայագետներ Հյուբշմանի, Մեյեի, Բոպի մասին, բացատրում Դիոնիսիոս Թրակացու մեկնիչների կատարածը:

Չնայած կար այդ առարկայի դասագիրքը. Աբրահամյանն ուներ սեփական դասընթացը: Տպավորիչ էին հունահռոմեական գրականության դասերը, որոնց դասագրքերը գրել էր մեզ դասավանդող Առաքել Առաքելյանը, որը չնայած 84 տարեկան էր, հագնվում էր ինչպես «Լոնդոնյան դենդի»:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի տնօրեն Արարատ Ղարիբյանը մեզ դասավանդեց երկու առարկա՝ «Բարբառագիտություն», «Պատմական քերականություն»: Չնայած, որ նա արդեն բավականին տարեց էր, սակայն ուներ երիտասարդի ավյուն, և այնքան բարձր էր խոսում, որ նրա ձայնը լսվում էր փողոցից:

Առաջին անգամ, երբ մտավ լսարան, ասաց. «Անիչկա բաջի տյոռնը պյաց, Կյուկին կյամ ա կլյոխը պյաց» և ավելացրեց, թե ինքը բարբառագիտություն է ավանդելու:

Անմոռանալի են հայ գրականությունից պրոֆեսոր Պարտիզունու դասերը, որոնք համեմվում էին այլ գրականություններից բերված օրինակներով: Նա շատ երկրներում էր ճամփորդել ու պատմում էր այդ երկրների մասին: Մինչև հիմա հիշում եմ, թե որքան տպավորիչ էր կարդում Արշալույս Բաբայանը «Վարդանանք» պատմավեպը: Նրա հետ մենք մտքով սլանում էինք Ոսկեդար, մասնակցում Ավարայրի դեպքերին: Պարույր Սահակյանը առաջին դասախոսությանը հարցրեց, թե ովքեր են տանը ստանում «Գրական թերթ» և տեսնելով, որ հատուկենտ ուսանողներ են կարդում այդ թերթը, ասաց. «Բա էլ ինչու եք ընդունվել այս ֆակուլտետը»:

Մինչև կյանքիս վերջը հիշելու եմ Սողոմոն Սողոմոնյանի դասախոսությունները Գյոթեի ու Լեսինգի մասին:

Մենք անցնում էինք «Հին աշխարհի պատմություն», իսկ չորրորդ կուրսում՝ «Արվեստի պատմություն»: Այդ առարկաները մեզ ավանդում էր կախարդիչ խոսք ունեցող Մորուս Հասրաթյանը՝ հանճարեղ Նիկողայոս Մառի և Հովսեփ Օրբելու արժանավոր ասպիրանտը, որը նրանց աշակերտել էր Լենինգրադում ու ողջ կյանքում մնաց նրանց գործի շարունակողն ու հայացքների հետևորդը:

Այս բոլոր թվարկած դասախոսները նշանավոր դոկտոր, պրոֆեսորներ էին, մի մասը Հայաստանի Ազգային ակադեմիայի անդամներ, որոնց ճանաչում էին Հայաստանի սահմաններից դուրս:

Հիմա գիտական առաջընթացն առավել պարտավորեցնում է մայր բուհի բոլոր դասախոսներին՝ ձգտելու համընթաց քայլել առաջադեմ երկրների բուհերին ու երբեք չմոռանալ, որ Ոսկեդարը մեզ մշտապես պետք է հիշեցնի ու պարտավորեցնի չծուլանալ, այլ եռանդուն ձևով առաջ մղվել, որպեսզի իրականանա այն մեծ երազանքը, որն ունեցել են Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին, Խաչատուր Աբովյանը, Կոմիտասը, Խրիմյան Հայրիկը, Նիկողայոս Ադոնցը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, շատերը, որոնք առաջին հերթին եղել են մեծ ուսուցիչներ:

Ալիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՈՒՍԱԼԻ ՁԵՌ-ՔԵՐՈՒՄ Է

Բանասիրական ֆակուլտետի աշխատանքային կարևոր ուղղություններից է պրակտիկայի կազմակերպումը, որը ղեկավարում է դոցենտ Լուսինե Գալստյանը: Մինչ դպրոցներ մեկնելը ֆակուլտետում կազմակերպվում է պրակտիկայի կոնֆերանս, նշվում անելիքները, տրվում հանձնարարականներ: Տիկին Գալստյանը մեկիկ-մեկիկ գիտի ուսանողներին, ծանոթ է նրանց ուժեղ և թույլ կողմերին: Կազմակերպչական հստակ աշխատանքը բերում է իր պտուղները: Խորհրդակցում է տնօրենների և ուսուցիչների հետ, գտնում աշխատանքի լուծման լավագույն բանաձևը, համախմբում ամբիոնների մեթոդիստներին: «Պրակտիկան կարևոր հարթակ է ուսանողի համար: Այստեղ ծնված նոր գաղափարները՝ որպես գիտելիք, ուսանողներն օգտագործում են հետագայում»,-հստակ նշում է Լուսինե Գալստյանը: Ֆակուլտետում հետաքրքիր է ամփոփվում պրակտիկան. նոր դասանմուշներ, մեթոդական երաշխավորություններ, ուսուցչի ժեստ և խոսք, անսպասելի իրավիճակներ հայոց լեզվի և գրականության դասագործընթացից. սա դեռ ամբողջական ցանկը չէ քննարկվող հարցերի: Գիտելիքն ու մեթոդիկան խաչվում են ու արդյունքում ձևավորվում է նոր ուսուցչի մոդելը: Ի դեպ, օրեր առաջ դոցենտ Լուսինե Գալստյանը բոլորեց իր կյանքի 50-ամյակը: Մաղթենք մեր գործընկերոջը լուսաշող գալիք, աշխատանքային նորանոր ձեռքբերումներ՝ ի շահ Մանկավարժական համալսարանի:

Աշոտ ԳԱԼՍՏՅԱՆ

ԼՐԱՀՈՍ

«Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում»

ՀՊՄՀ 100-ամյակին ընդառաջ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը ապրիլի 26-ին կազմակերպել էր «Բնությունը երիտասարդ բնագետի հետազոտություններում» խորագրով ուսանողական գիտական նստաշրջան, որտեղ ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները ներկայացրին 11 զեկուցում:

Բացման խոսքում ֆակուլտետի դեկան Ռուզան Սադոյանը հույս հայտնեց, որ ուսանողները կներկայացնեն իրենց հետազոտական աշխատանքների հետաքրքիր արդյունքները, որոնց շուրջ կծավալվի գործնական, շահագրգիռ և արդյունավետ քննարկում:

Համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց ուսանողական նախաձեռնությունը՝ փաստելով, որ հետազոտական բաղադրիչը բուհի կարևորագույն ոլորտներից մեկն է, որը մշտապես ուշադրության արժանի է՝ մասնագիտական որոշակի որակի ձևավորման տեսանկյունից: Այն այսօր ոչ միայն Մանկավարժական համալսարանում, այլև ակադեմիական ոլորտում համար մեկ խնդիրներից է: Ռեկտորը բարձրաձայնեց, որ համալսարանի ռազմավարական ծրագրում մեծ դեր է վերապահված հետազոտող ուսուցչի մոդելին, որը մեզանում մասնագիտական գործունեության զարգացման կարևորագույն բաղադրիչներից մեկն է համարվում՝ դպրոց-համալսարան-դպրոց կապի գործակցության շրջանակում:

Ռեկտորը կարևորեց գիտաժողովի խորագրի ներքո ներկայացված զեկուցումները՝ ընդգծելով, որ այն հատկապես առանձնահատուկ է, որովհետև կազմակերպել են ուսանողները:

Ուսանողների հետազոտական վերլուծությունները վերաբերում էին մասնագիտական ամենատարբեր թեմաների՝ Որոտան գետի ձկնաշխարհի տեսակային փոփոխություններին, մանկական քաղցկեղի առաջացմանը նպաստող գործոններին, ազգային գաղափարախոսության ձևավորմանը աշխարհագրության շրջանակում, խաղա-

յին տեխնոլոգիաների կիրառմանը դպրոցական կենսաբանության գործընթացում, Տավուշի մարզի Ոսկեվանի աշխարհագրական-հայրենագիտական վերլուծության կրթադաստիարակչական դերին, Սյունիքի մարզի պոչամբարների էկոլոգիական հետևանքներին, Ախուրյան գետի ավազանի էկոլոգիական հիմնախնդիրներին և այլն:

Շահագրգիռ քննարկում ծավալվեց ուսանողների, գիտական ղեկավարների, գիտաժողովին մասնակցող դասախոսների միջև:

Գիտաժողովի ավարտին ամփոփվեցին արդյունքները, մասնակիցներն էլ հավաստագրեր ստացան կատարած հետազոտական աշխատանքի համար:

ՀԱՄԱՏԵՂՀԱՄԵՐԳ

Մանկավարժական համալսարանում կայացավ Կուլտուրայի ֆակուլտետի փողային և Երևանի երաժշտական № 13 հատուկ դպրոցի նվագախմբերի համատեղ համերգը՝ նվիրված բուհի հիմնադրման 100-ամյակին: Այս դպրոցի հետ ֆակուլտետը երկարամյա համագործակցություն ունի, դպրոցի շրջանավարտների մի մասն էլ ուսումը շարունակում է Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետում:

Պետք է նշել, որ 80-ամյա հատուկ դպրոցի փողային նվագախումբը ամենամեծ մանկական նվագախումբն է Հայաստանում, որի շրջանավարտները հանդես են գալիս Հայաստանի և արտերկրի մի շարք առաջատար նվագախմբերում:

Յուրահատուկ համերգային ծրագրում հատուկ դպրոցի՝ միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր սաները հանդես եկան աշխարհահռչակ երաժիշտների ստեղծագործությունների կատարումներով:

Հաճելի է փաստել, որ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժորը մեր համալսարանի շրջանավարտ Տիգրան Լալայանն է:

Համերգի երկրորդ մասում ՀՊՄՀ փողային նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար Կոլյա Մարիտիրոսյանի նվագավարությամբ, ներկայացրեց Արա Գևորգյանի «Արցախ», Ռոբերտ Պետրոսյանի «Արևելյան պար» և Էդգար Հովհաննիսյանի «Սարդարապատ» ստեղծագործությունները: Համերգը եզրափակվեց Արմեն Մարտիրոսյանի «Հայկական բանակ» ստեղծագործությամբ, որը մեծ խանդավառություն առաջացրեց դահլիճում:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՏԱՐԵՐՔԻ ՄԵՋ

Վեհանուշ Մուրադյանի հարցազրույցը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն ԴԱՆԻԵԼՅԱՆԻ հետ

Գրական աշխարհի հետ հոգևոր տրոփով է կապված հարյուրամյա մեր համալսարանի երբեմնի գրականության ամբիոնը, գրեթե նույնքան՝ հարյուր տարվա մենաշնորհի իրավունքով: Այդ կապը տասնյակ տարիների մեջ թրծել են մեր գրականության երախտավորները՝ բանաստեղծներ եւ արձակագիրներ, որոնք առաջինը այստեղ՝ մանկավարժականում են ստացել ստեղծագործ խթանիչ նկարագիր և գրական ընկալումների, փառքի ու տառապանքի դառնանուշ ճանապարհի ուղեգիր: Այդպես բարձրացան արձակի վարպետներ Մկրտիչ Սարգսյանը, Հրանտ Մաթեւոսյանը, բանաստեղծներ Սուրեն Մուրադյանը, Ռազմիկ Դավոյանը, Արամայիս Սահակյանը, Երվանդ Պետրոսյանը, Արմեն Մարտիրոսյանը, Հակոբ Մովսեսը և շատ ուրիշներ, որոնց տաղանդը բացվեց արդեն մեր լսարաններում, ազգային-քաղաքական կեցվածքի առճակատումներում: Նրանց կողքին էին գրականության հիմնասյուն դասախոսները՝ Արշալույս Բաբայանը, Վաչե Պարտիզունին, Հեկտոր Ոշտունին, Եղիշե Պետրոսյանը, Սևակ Արզումանյանը, որոնք իրենց ժամանակի ազգային գրական շարժման մեջ դիմագիծ պահած ուժեր էին: Այսօր նրանց գործունեությունը լիարժեքորեն շարունակում են համեմատաբար նոր սերնդի գիտնական մանկավարժները՝ Ալիտա Դոլուխանյան, Մարտին Գիլավյան, Սուրեն Դանիելյան և ուրիշներ:

Վերջին երկուսի գիտական ուշադրության կենտրոնում նոր ու նորագույն գրականության հիմնախնդիրներն են, այն, ինչ կազմում է 2013-ից տրոհված և արդյունքում վերածեւավորված Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի գիտաուսումնական բովանդակությունը: Ամբիոնի վարիչը պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն է:

Ամբիոնի երկու անդամ՝ վարիչը և պրոֆ. Մ. Գիլավյանը, ՀՀ ԳԱԱ համակարգում գործող աստիճաններ շնորհող գիտական խորհրդի անդամ են, ընդ որում՝ Ս. Դանիելյանը հայ նոր և նորագույն գրականության ենթահանձնաժողովի նախագահն է, իսկ Մ. Գիլավյանը՝ ԳԱԱ Գրականության ինստիտուտի գիտխորհրդի անդամ, մեր համալսարանի «Հայագիտական հանդես»-ի երկարամյա խմբագիրը: Ամբիոնը ԵՊՀ-ում և ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտում գործող մասնագիտական խորհուրդների որոշումներով տարիներ շարունակ ներկայանում է ատենախոսությունների քննությամբ՝ իբրև առաջատար կազմակերպություն:

- Պարոն Դանիելյան, Դուք նշում եք, որ ամբիոնն առաջին հերթին հանդես է գալիս ուսումնական և գիտական նոր կողմնորոշումներով և հետաքրքրություններով: Կարո՞ղ եք ուրվագծել անցած ինը տարիների նորարարական քայլերը:

- Ամբիոնն աշխատում է ծավալուն խիտ դասաբաշխումով՝ և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում, և՛ ետբուհական մակարդակում: Նիստերում քննարկվում են կրթական որակի բարելավման, ծրագրային հեղինակների և ժամաբաշխման զանազան հարցեր: Սկզբից վերանայեցինք ուսումնական ծրագրերը, կազմեցինք և ժամանակի նոր լույսի տակ հրատարակեցինք նոր ու նորագույն գրականության բուհական հնարավորինս ամբողջական ծրագիր, ուր փոխեցինք ավանդական կարծրատիպեր, հայացք, վերականգնեցինք երբեմնի քաղաքական շնչին կուլ գնացած դեմքերի ու նրանց գործերը (օտարագիր գրողներ, Ավ. Ահարոնյան, Ռ. Սևակ, Հ. Օշական, Կ. Զարյան, Մ. Իշխան, Զահրատ, Զ. Խրախունի, Ռ. Հատտեճյան), խորացրինք Հ. Սահյանի, Հր. Մաթևոսյանի նյութերը, վերանայեցինք գիտատեսական, գիտամեթոդական և ընտրովի դասընթացները:

- Ի՞նչ եք կարծում, ուսումնական հատվածում կա՞ն դեռեւս չլուծված խնդիրներ, և եթե կան, հաղթահարման ճանապարհները…

- Իհա՛րկե, կան: Եվ այնպիսիները, որոնց լուծման համար մեզ համալսարանի երիտասարդ ղեկավարության աջակցությունը խիստ անհրաժեշտ է: Դրանք վերաբերում են առաջին հերթին գրականության տեսական բնույթի դասընթացներին, որոնք, մեր կարծիքով, պիտի վերադառնան այս ամբիոնին, մանավանդ որ այսօր շատ ենք խոսում դպրոցական և համալսարանական ծրագրերի համադրման անհրաժեշտության մասին, իսկ դպրոցում գրական-տեսական գիտելիքներ աշակերտներն ստանում են «Հայ գրականություն» առարկայի շրջանակում: Ուսանողները շփոթում են ժանրերը, իսկ դա հաճախ գալիս է տեսական և գրականության պատմության դասընթացների թույլ աղերսից:

Եվ երկրորդ, շատ եմ երազում այն օրը, որ մանկավարժական համալսարանը մեկ հարկի տակ համախմբի նաև արևմտահայերին, թեկուզ մագիստրոսական մասնագիտացումի թելադրանքով: Մենք հեռացել ենք արևմտահայի ինքնությունից: Ժամանակը չէ՞ վերջապես նոր վերադարձի: Մեր համալսարանի ուսումնամեթոդական ներուժը միավորիչ դեր կարող է ստանձնել. չէ՞ որ Հայաստանի կրթական համակարգում՝ հանրակրթական դպրոց և համալսարան, արևմտահայերենն արտաքսված է:

- Այժմ ամբիոնի համեմատաբար երիտասարդ սերնդի մասին:

- Գիտակ մասնագետներ ունենք՝ դոցենտներ Արմինե Մուրադյան, Լուսինե Գալստյան, Նաիրա Տողանյան, Նաիրա Խաչատրյան, Քնարիկ Աբրահամյան: Նրանք ամբիոնում ներգրավված «դրսեկ» փորձառու պրոֆեսուրայի հետ (Ալբերտ Մակարյան և Լաուրա Մուրադյան) քայլ առ քայլ ուսանողության առջև բացում են մեր գրական գանձարանի նոր ու նորագույն ծալքերը, հայտնաբերում գրական տաղանդի նոր առկայծումներ: Պարբերաբար հանրապետական և միջազգային հանդեսներում տպագրում են գիտական հոդվածներ, որոնց թիվն անցնում է 100-ից, տասնյակ դասագրքերի, մենագրությունների և հոդվածների հեղինակներ են:

- Ի՞նչ կասեք գիտական բաղադրիչի մասին:

- Ամբիոնը պարբերաբար կազմակերպում է միջազգային, հանրապետական, ուսանողական գիտաժողովներ, որոնց ձգտում է հաղորդել գրական հարցադրումների ուղղություն՝ Հայաստանի և Արցախի համալսարանական հաստատությունների և ակադեմիական համակարգի առաջատար ներկայացուցիչների, Սփյուռքի աչքի ընկնող մասնագետների, ուսանողների: Որպես կանոն՝ նյութերն ամփոփվում են առանձին ժողովածուներում: Առայսօր լույս են տեսել յոթ այդպիսի հրատարակություններ՝ գլխավորապես համալսարանի միջոցներով: Դրանք վերաբերել են Հովհաննես Հինդլյանի, Հովհաննես Թումանյանի, Համո Սահյանի, Առաջին Հանրապետության կազմավորման հոբելյաններին, հայ-ֆրանսիական գրամշակութային առնչություններին, վեպի տեսական ընդգրկումներին և այլն: Այդ գիտաժողովներից երեքը եղել են արտագնա՝ Սյունիք, Տավուշ, Լոռի, Վրաստան:

Ամբիոնը նախաձեռնել է հանրապետական և համալսարանական տարաբնույթ գիտաժողովներ, այդ թվում և ՀՀ ԳԱԱ համակարգի հետ, որոնցից նշենք Հայոց ցեղասպանության 100-ամյակին, Նար-Դոսին, Եղիշե Չարենցին, Վարդգես Պետրոսյանին, Զարեհ Խրախունուն, գրականագետներ Էդուարդ Զրբաշյանին, Վաչե Պարտիզունուն և այլոց նվիրվածները:

- Ինչպե՞ս եք գործակցում այլ ուսումնական ստորաբաժանումների հետ:

- Նախ, օգտագործելով «Սփիւռք» Գիտաուսումնական կենտրոնի փորձը, ամբիոնը նախաձեռնում է սփյուռքահայ մշակութային գործիչների, մանկավարժների հետ հանդիպումներ, մասնակցություն բերում Սփյուռքի ուսուցիչների դասընթացներին: Համագործակցում է բանասիրական ֆակուլտետի, նրա ամբիոնների, պատմության, մանկավարժության, օտար լեզուների և այլ շահագրգիռ գիտաուսումնական միավորների հետ:

Այս տարվա նախաձեռնությունը կապվում է «Համազգային» հայ կրթական և մշակութային միությանը, որի հետ սեպտեմբերի 23-ին կազմակերպելու ենք պոլսահայ նորագույն շրջանի գրականությանը նվիրված համահայկական համաժողով՝ նվիրված Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ 100-ամյակին:

ԼՐԱՀՈՍ

ԸՆՏԱՆԻՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՍԵՎԱԴԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ

Մանկավարժական համալսարանում կայացավ ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի առաջին շրջանավարտներից Սևադա Գրիգորյանի անհատական ցուցահանդեսը, ուր նկարիչը ներկայացրել էր վերջին 7 տարիների շուրջ 18 աշխատանք՝ մանրանկարչության տարրեր, ժողովրդական թեմաներով ներկայացված ֆիգուրատիվ կոմպոզիցիաներ:

«Ինքնատիպ արվեստագետ, ում ստեղծած բնաշ-

խարհը, բազմաֆիգուր և ոճավորված դեկորատիվ կոմպոզիցիաները մեծ խիզախություն, գրագիտություն և նրբին ճաշակ են պահանջում»,-այսպես ներկայացրեց նկարչին Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը: Արա Հակոբյանը հավելեց՝ կյանքում ամենակարևորը ընտանիքն ու արվեստն են. դրանց կարելի է հանդիպել նկարչի աշխատանքներում, որոնք կսովորեցնեն երիտասարդ արվեստագետներին դաստիարակվել գեղագիտական և հոգևոր խորհրդով:

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Սաթենիկ Մելիքյանի բնորոշմամբ Սևադա Գրիգորյանի աշխատանքներում զգացվում է իր վարպետի՝ քանդակագործ Ղուկաս Չուբարյանի ազդեցությունը, ինչպես նաև բնորոշ է ռուսական ժողովրդական արվեստի որոշակի ուղղվածություն:

Նկարիչն աչքի է ընկնում ինքնատիպ ոճով ու անհատական ձեռագրով. այդ ընդգծվածությունը նկատելի է նրա աշխատանքներում:

«Նկարչի աշխատանքները ոչ այնքան գեղանկարներ են, որքան գեղանկարի միջոցով դեկորատիվ արվեստի նմուշներ ստեղծելու փորձ.«Կին, մայր, քույր, դուստր, երեխա, ընտանիք, գերդաստան, ազգ. նկարչի մտահորիզոնում ու վրձնի ներքո ընտանիքն է»,-ասաց Սաթենիկ Մելիքյանը:

Գեղանկարիչն ինքն էլ փաստեց, որ իր ստեղծագործությունների թեմաների կիզակետում ընտանիքի խորհուրդ է, որի հիմքում էլ սերն է կնոջ և հայրենիքի նկատմամբ: Նա լիահույս է՝ այդ սերը կփոխանցվի ուսանողներին, և ոչ միայն. արվեստը կարող է միջավայրը ավելի լավը դարձնել:

Գիտաժողով

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերությունը «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի մասնաճյուղ «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հետ համատեղ կազմակերպել էր գիտաժողով՝ «Հայաստան. դարերի խորքից» խորագրով, որը նվիրել էին բուհի հիմնադրման 100-ամյակին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին ՀՊՄՀ գիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը, ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը, գիտության և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալ Սամվել Պողոսյանը, «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարանի փոխտնօրեն Վահե Սարգսյանը:

Նիստը վարում էր ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Ռուզաննա Մուխսյանը:

Գիտաժողովի զեկուցումների համար ընտրված թեմաները բավականին հետաքրքիր էին թե՛ ժամանակային

ընդգրկումների, թե՛ բազմազանության ու բովանդակային վերլուծումների տեսանկյունից. ներկաները լսեցին հետաքրքիր զեկուցումներ ու փաստեր թանգարանային հավաքածուների, անտիկ աղբյուրներում Աղվանքի, Զվարթնոցի սբ. Գրիգոր տաճարի ավերման պատճառների, Հայաստանում ֆրանսիացի հայագետ Ժ. Մ. Մորգանի հետազոտությունների, Գարեգին Նժդեհի ցեղակրոն գաղափարախոսության, Վանի ինքնապաշտպանական մարտերի, թալիբան շարժման, Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի համեմատական վերլուծության և այլ թեմաների մասին:

ՀԱՅԵՐԵՆԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Եթե որոշելու լինեն նաև լեզուների տարեթիվը նշել՝ իբրև հոբելյանական, ապա հայերենի և իրեն ցեղակից մյուս լեզուների (ռուսերենի, ֆրանսերենի, իտալերենի, գերմաներենի, անգլերենի և այլն) հոբելյանը միասին պիտի նշվի հազարամյակների հաշվով, թեև արդեն նրանք մտել են մեզ հայտնի տասնմեկերորդի մեջ: Եթե նշելու լինեն, անպայման պիտի հիշեն այն վայրը, որտեղ նախապես ապրել են այդ լեզուների կրողների նախնիները՝ իբրև մեկ ցեղ (անունով՝ «հնդեվրոպացի»), անհիշելի ժամանակներից, մինչև նրանց տարբեր ուղղություններով բաժանվելն ու ներկայումս հանգրվանելը՝ ծայր հեռու արևելքից նույնքան հեռու արևմուտք: Այդ վայրն է աշխարհագրորեն Առաջավոր Ասիան և նրա կենտրոնական մաս Հայկական լեռնաշխարհը: Դա արդեն վաղուց հաստատված է գիտության մեջ:

Հայերենը իրեն կրող հանրության մի քանի հազարամյա պատմության բացառիկ արձագանքն է՝ հիշատակարան և վկայություն անհիշելի ժամանակների, իր և ցեղակիցների մասին, ընդ որում՝ քաղաքակիրթ և միշտ ստեղծարար: Ժամանակի արձագանքը կա նրա մեջ, ինչպես լույսը՝ իր լեռների անձավներում, իր սառնորակ ջրերը՝ քարածերպերից բլթացող ակունքներում, ինչպես հունդը՝ տիվագոլ ցելերում, իր կապույտ երկինքը՝ զովասուն հորիզոններում: Հազարամյակների այդ շունչն է այսօր առնում այդ լեզուն՝ իր անձավներում, սառնորակ ակունքներում, հունդակալ արտերում և զովասուն հորիզոններում:

Հայերենը ինքնության վկայություն է, որ գիտենք և ուսումնասիրում ենք մենք, որով հետաքրքրվում են նաև ուրիշ ուսումնասիրողներ՝ իբրև հնամյա և հնագույն մատյան մարդկության այդ կիրթ և արարող մասի (անունով՝ «հնդեվրոպական»), շուրջ տասհազարամյա հայտնի անցյալի մի տեղեկատու՝ նոր ժամանակի համար, ինքը՝ հնամենի:

Մեծն Պարույր Սևակն իր հոդվածերից մեկում հայտնում է այն միտքը, թե «ով պատմություն ունի, չի կարող հետ չնայել»:

Սա տեղին է առհասարակ՝ մարդկության իդեալի մեջ. մարդ արարածի անցած ուղին, ազգեր ու ժողովուրդներ, որ շարունակում են քար դնել քարի՝ մշակույթ համարելի գեղեցիկ շենքի համար, մարդկության լավ ապագայի հույսով:

Լեզուների պատմությունը ժողովուրդների պատմություն է, և այն որքան անցյալից է գալիս, նույնքան հիմնավոր է և աներկբայելի: Ժողովուրդների մի ամբողջություն է եղել և կա այսօր, որ հումանիտար գիտության մեջ, արդեն երկու հարյուր տարուց ավելի է, ինչ կոչվում է հնդեվրոպական: Նրանք այսօր տարածված են Հնդկաստանից մինչև ծայր Եվրոպա՝ իռլանդական կղզիներ. նրանց մի մասն անցել է երկրագնդի մյուս կեսը: Հազարամյակներ են գլորվել, և նրանց հնդեվրոպական բնույթը մնացել է նույնը՝ հայացք դեպի բարին, ստեղծարար կյանքի մեջ սիրո և լավի դավանող, հավատքի մեջ՝ մեղմության կրող, որ ավելի հետագա՝ քրիստոնյա և նման այլ մաքրությանը հետևող:

Մեր օրերի առաջագնա մարդկության հիմնական մասը, հայտնի է, հնդեվրոպացիներ են, այսինքն՝ բարուն, գեղեցկին և լավի արարմանը հետամուտ: Եվ նման ժողովուրդների ակունքները, ըստ ներկայիս գիտության՝ հնագիտության, ազգագրության, դիցաբանության, պատմագիտության, առավել ևս լեզվի մասին գիտության տվյալների, հասնում են, ինչպես ասվեց, մի քանի տասնյակ հազարամյակի խորքերը: Այդ ամբողջության մեջ է հայերենը կրող հանրությունը՝ հայ ժողովուրդը (էթնոսը):

Եվ այդպես՝ հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի, բառապաշարի և իմաստաբանության (իմա՛ լանդշաֆտ՝ երկրատարածք, ֆլորա՝ բուսական աշխարհ, և ֆաունա՝ կենդանական աշխարհ, վերերկրյա և այլ պատկերացումներ, ազգակցություն և մարդկային առնչություններ և այլն) տվյալները վաղուց ցույց են տալիս այդ ժողովուրդների ոչ միայն ցեղակցությունը, այլև պատկերացումների և ձգտումների միակերպությունը:

Նրանք նախնական ժամանակներում, սա նույնպես հայտնի է, տևականորեն առնչվել են միջագետքյան (սեմական և այլն) քաղաքակրթությանը, որն ապացուցվում է, օրինակ, նրանց միջև կատարված շուրջ երկուսուկես տասնյակ բառային («բառիմաստային») փոխառություններով և որոնց ուղիղ կեսը, օրինակ, կա հայերենում՝ աստղ «լուսատու», արտ «վարելահող. արտ», գինի «որթատունկից մի տեսակ խմելիք», դոն «մի տեսակ հաց», դուռն (նաև դուրս) «տնից դուրս՝ միջոց (երկփեղկ)», երկան «աղաց. երկանք», եւթն «յոթ (թվականը)», կով, (հ)անդ «հողամաս. հանդ», նաև «փոսորակ. ջրերի վրա գնացող միջահան գերան», տաւն «զոհաբերում. տոն», ցախ «մացառ», որ գիտական պարզաբանման հարց է՝ անցում սեմականից հնդեվրոպականի՞ն, թե՞ հակառակը. թերևս վերջինը:

Ցեղակից լեզուներից, նշենք, հունարենը, հայերենը և ալբաներենը, առանձին ճյուղ են, քանի որ իրենց բնակության տարածքներում եղել են ավելի հարամնա, քան որ կարող էին, իրենց հերթին, ճյուղավորվել, որ նկատում ենք մյուս լեզուների (խեթական, հնդիրանական, կելտական, գերմանական և այլն) դեպքում:

Հայերենը միջին դիրք է գրավում ոչ միայն իրանական, հունական և բալթիկ-սլավոնական լեզուների միջև, ինչպես ցույց է տալիս դասական հնդեվրոպաբանությունը (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Ֆ. Ֆորտունատով, Հ. Աճառյան և ուրիշներ), այլև այդ բնագավառում նորագույն տվյալների համաձայն՝ հնագույն գծեր է հանդես բերում խեթալուվական, թոխարական, իտալյան, կելտական և գերմանական լեզուների համեմատությամբ, և թե՛ մեկ և թե՛ մյուս տիպի լեզուները, իբրև առաջավորասիական մշակույթի կրողներ, զբաղեցնում են իրենց բնակության ներկայիս վայրերը, իսկ նախահայրենիքի (Առաջավոր Ասիայի) բուն մասում՝ Հայկական լեռնաշխարհում այսօր հայերենն է իբրև առանձին, նման էթնիկական մշակույթի պատվար (մ. թ. ա. IV- III հզր. ի վեր):

Իսկ հետագայում, ուշ ժամանակներում վրա հասած այլևայլությունը փորձել է խամրել այդ հնդեվրոպականի պարզությունը, սակայն գիտության ջահը մնում է աշտանակի վրա, ոչ գրվանի տակ: Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում, այլև ցեղակից այդ լեզուների կրողների նախնական բնականության վայրի որոշարկման առումով հայտնվել է անառարկելի այն մոտեցումը, որ հնդեվրոպացիներն ունեն առաջավորասիական նախնականություն (լեզվաբանական տվյալներով՝ մ. թ. ա. X - IX հզր.) մշակույթ՝ սկզբնականից մինչև կատարյալը: Հայերենի տվյալներին (հնչյունական, բառային, իմաստային, բանաստեղծական խոսքի և այլն) այդ խնդրի լուծման մեջ, իրոք, տրվում է անհամեմատ մեծ կարևորություն, այդ տվյալներն ունեն բացառիկ նշանակություն:

Տարբեր երկրներում այսօր լեզուների համեմատական ուսումնասիրությունը մասնագետները չեն պատկերացնում առանց հայերենի հնագույն (արխաիկ) տվյալների ընդգրկման: Հայերենի համեմատական-ծագումնային քննությունը, կարելի է ասել, մնում է լավագույն շարունակության սպասումով: Մեր ունեցած լավը մեր ապագայի համար լավագույնի հիմք է, հարկ է նրան ի սպաս դնել ճիշտ իմացությունը և կարողությունը: Մեր լեզվի ինքնությունը արտացոլումն է մեր անցյալի մշակույթի, որ մենք պիտի ըստ ամենայնի ուսումնասիրենք՝ լայնությամբ ու խորությամբ, մեզ համար, ոչ թե այլոց ցույց տալու. մեր ինքնության ջահի ձեթը մենք պիտի ավելացնենք:

Ավելի մեծ ուշադրություն այդ ջահին, որ լուսավորում է անցյալը, մանավանդ գալիքը. և ով պատմություն ունի, պիտի պահի նրա լույսը ապագայի մեջ:

Վազգեն ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ. դ., պրոֆեսոր

ԼՐԱՀՈՍ

ՄՇԱԿՈՒՅԹ, ՈՐԸ ՄԵԶ ԱՊՐԵՑՆՈՒՄ Է

Օրը նշանավորվեց ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՌԴ ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանի «Քրիստոնյա Հայաստան» խորագրով ինքնատիպ ցուցադրությամբ. Հուշարձանների պահպանության միջազգային օրվա և Հայոց եղեռնի 107-րդ տարելիցի կապակցությամբ «Հիշատակ» վերնագրով նախաձեռնության հեղինակը համալսարանի պատմության թանգարանինն էր:

Թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանն իր ելույթում փաստեց՝ պատմական Հայաստանի ողջ տարածքով սփռված պատմամշակութային հուշարձանները հայ քրիստոնյաների ներկայության վկաներն են:

Շուրջ 60 գեղանկարչական աշխատանքով ներկայացված ցուցահանդեսը մեր ժողովրդի նյութական և հոգևոր ժառանգության դրսևորումն էր:

Ելույթ ունեցավ ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը: Մեր ազգային ինքնության աղբյուրագիտությանը, հոգևոր մշակույթին վերաբերող եզակի ցուցադրության համար նա շնորհակալություն հայտնեց պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին՝ կարևորելով մշակութային արժեքների ճանաչումը նաև կտավների միջոցով:

«Նկարներն ինքնին խոսուն են և գեղարվեստական արժեք լինելուց զատ տեղեկատվական նշանակություն ունեն,-ասաց Լ. Ներսիսյանը:-Ներկա ցուցադրությունը վերաբերում է ոչ միայն պատմամշակութային ժառանգությանը, այլև Մեծ եղեռնին: Ավետարանից ես վերցրել եմ Քրիստոսին վերաբերող ասույթները և մանրանկարչությամբ ներկայացրել, նաև եկեղեցիների որոշակի քանակ, որոնք մատնանշում են հայի քրիստոնյա լինելը»:

Ցուցադրության հետ կապված իր մտորումները ներկաների հետ կիսեց գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը, ով զինվորական ծառայություն է անցել Նախիջևանում և տեսել պատմական արժեքավոր հուշարձանների ոչնչացումը:

Պրոֆեսոր Համլետ Միքայելյանը, ով մաթեմատիկոս է և նկարիչ, փաստեց՝ գեղեցիկը բացառիկ երևույթ է, այն ամենուրեք է: «Լեմս Ներսիսյանը գեղեցիկը մեզ ներկայացնելու բացառիկ շնորհ ունի: Նա ներկաների ուշադրությունը հրավիրեց ներկայացված կտավներին, ուր հայոց լեռները, դաշտերն ու գետերը հայոց եկեղեցիների հետ ներդաշնակության մեջ են: Եվ զարմանալիորեն այդ ամենը ներդաշնակվում է Լեմս Ներսիյանի հոգևոր աշխարհին:

Հայոց եկեղեցիներն այն հաստատություններն են եղել, որտեղ ստեղծվել է հայ մշակույթը, իսկ մենք ունենք հարուստ մշակույթ, որը մեզ ապրեցնում է, որով հպարտանում ենք, որը մեր հոգևոր սահմաններն է պահում»,- ամփոփեց բանախոսը՝ ափսոսանք հայտնելով, որ շատ անգամ մեր մշակույթը չենք ճանաչում, և որ այս ցուցադրությունը նվիրված է մեր մշակույթի ճանաչմանը:

Ավարտին ներկաների համար ցուցադրվեց վիրտուալ ցուցահանդես, ապա լսեցին պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանի՝ վանդալիզմին նվիրված զեկուցումը և դիտեցին համանուն վերնագրով ֆիլմ:

Մ Տ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

«Չյունը ավելի շուտ եկավ: Ամեն ձյունի հետ իմ հոգուն մի սպիտակ տխրություն է իջնում: Գիտեմ, որ այսպես անցնում են տարիներս, և ամեն ձյունի հետ խոհերս ծանրանում են ավելի: Ամեն ձյունի հետ նստում եմ զրույցի հուշերիս հետ՝ ի՞նչ տվեցին ինձ օրերս, և ի՞նչ թողեցի ես նրանց:

Եվ միշտ էլ մի անմեկնելի դժգոհություն է մնում իմ մեջ. ինչ էլ արած լինեմ, ինչպես էլ արած լինեմ, ինձ խիստ եմ դատում, մանավանդ այն համոզմանն եմ, թե «կյանքում միշտ էլ ուզածս շատ է, արածս քիչ է»:

Սիրում եմ դժվարությունները, և քաղցր է դժվարին ձեռք բերածը, և հաճույքն ավելի մեծ է, երբ սեփական ուժերով ես ամեն ինչի հասնում:

Չյունը շուտ եկավ: Այս տարվա խոհերս և՛ տխուր են, և՛ ուրախ ու վախեցնող են:

Այս տարի ավարտում եմ ինստիտուտը: Իմ ուսանողական վերջին ձմեռն է սա, իմ ուսանողական վերջին տարվա վերջին Նոր տարին: Եվ մինչ այդ, ահա, կամեցա հաշվետու լինել ինքս իմ առաջ:

Չորս տարի ուսանել եմ մի ինստիտուտում, որին շատ բանով եմ պարտական:

Առաջին կուրսում ընտրվեցի Կոմերիտական կազմակերպիչ: Ինձ վստահվեցին նաև Ուսանողական գիտական ընկերության և Գրական ստուդիայի կազմակերպչական աշխատանքները:

Գրական-գիտական զեկույցներն ու գրական հանդիպումները հղկում էին մեր միտքն ու ճաշակը:

Մենք արդեն ոչ միայն պատրաստված մանկավարժներ ենք, նաև՝ ապագա գրականագետ, լրագրող, բանաստեղծ:

Ինստիտուտը բացահայտեց յուրաքանչյուրիս ներաշխարհը և կյանքի ուղեգիր շնորհեց, շնորհեց հայոց լեզու և գրականություն ուսուցանելու իրավունք:

Այս տարի կավարտենք և կգնանք դպրոցներ, բարձր կպահենք ինստիտուտի պատիվը: Մեր ստացած լավագույնը սրբորեն կփոխանցենք մեր աշակերտներին, կարդարացնենք մեզ և մեր դասախոսների վստահությունը:

Ափսոս, որ ձյունը շուտ եկավ, շուտ զգացինք, որ ուսանողական վերջին ձյունն է, ինչպես և այս Նոր տարին մեր ուսանողական կյանքի վերջին Նոր տարին է»:

Այս նյութը տպագրվել է ուղիղ կես դար առաջ՝ 1972-ին, երբ մեր բուհը Մանկավարժական ինստիտուտ էր կոչվում, ներբուհական թերթը՝ «Մանկավարժ»:

Մեր բուհը մեզ համար ՄԱՅՐ ԲՈՒՀ էր, որից սնվում, որտեղ կրթվում և որով հպարտանում էինք: Հպարտանում էինք նախ մեր դասախոսներով՝ ակադեմիկոսներ Առաքել Առաքելյան, Արարատ Ղարիբյան, պրոֆեսորներ Աշոտ Աբրահամյան, Վաչե Պարտիզունի, Արշալույս Բաբայան, Վաղինակ Քոսյան, Հեկտոր Ռշտունի, Եղիշե Պետրոսյան, արձակագիր Բոգդան Վերդյան, Ավագ Խաչատրյան, Աշոտ Մարության, Արծրուն Բաղդասարյան, Դմիտրի Նազարյան, Աելիտա Դոլուխանյան: Նրանցից յուրաքանչյուրն, առանց բացառության, ուշադիր ու հոգատար էր մեր՝ ուսանողներիս հանդեպ, խրախուսում ու գնահատում էին մասնագիտական, բանաստեղծական միտքը, մեզնից կոփում էին մանկավարժներ, բանաստեղծներ, լրագրողներ, գրականագետներ: «Մանկավարժ»-ում տպագրված յուրաքանչյուր հոդված ու բանաստեղծություն դարձնում էին քննարկման նյութ, խորհրդատվության առիթ:

Ես չգիտեմ, հիմա կա՞, բայց մեր ժամանակ կար Ուսանողական գիտական ընկերություն, կար Գրական ստուդիա, կար Պատի թերթ՝ «Ստեղծագործում են ուսանողները»:

Ֆակուլտետում եռում էր գրական-մշակութային կյանքը: Այստեղ մկրտություն էին ստանում ո՛չ միայն ապագա մանկավարժները, այստեղ մկրտվում էին ապագա բանաստեղծներն ու լրագրողները, գրականագետները: Նրանք տեսանելի և ուշադրության կենտրոնում էին, գրական հանդիպումների առաջնագծում էին:

Ներկայացնեմ իմ օրինակը՝ հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի հետ հանդիպմանը ես իրավունք ստացա նրան ողջունել ֆրանսերեն լեզվով, Շիրազի հետ հանդիպմանը ողջույնի խոսքն ասել, «Գարուն» ամսագրի խմբագրակազմի հետ հանիպմանը ներկայացնել գրական ստուդիայի ստեղծագործող ուսանողությանը: Սիլվա Կապուտիկյանի հետ հանդիպումից հետո, դեկանատի փոքրիկ սենյակում, համեստ հյուրասիրության ժամանակ ըմբոշխնել եմ ոչ միայն նրա խոսքը, այլև նրա երգը:

Ինստիտուտի ղեկավարությունն ինձ հանձնարարեց ելույթ ունենալ Ժուռնալիստների միության համագումարում՝ ներկայացնելու ուսանողության տեսակետներն ու առաջարկները հանրապետական թերթ-ամսագրերի վերաբերյալ: Քննադատական ելույթս ծափերով ընդունվեց:

Թվարկումս ինքնագովության նպատակ չունի, ես դրա կարիքը չունեմ, այն էլ կես դար անց, պարզապես ուզեցի ի ցույց դնել մեր ֆակուլտետի բովանդակալից ու հետաքրիր առօրյան:

Անչափ հետաքրքիր և ուսանելի էին հանդիպումները ինստիտուտի շրջանավարտ բանաստեղծ-արձակագիրների հետ՝ Մկրտիչ Սարգսյան, Հրանտ Մաթևոսյան, Ռազմիկ Դավոյան, Արամայիս Սահակյան:

Հատկապես ամուր էր մեր ստեղծագործական կապերը «ՄԱՆԿԱՎԱՐԺ» թերթի հետ: Մեկ էլ հայտնվում էր աշխատակից Հովհաննես Պապիկյանն ու… արդեն գիտեինք՝ հոդված կամ բանաստեղծություն էր պետք: Տալիս էր հանձնարարականն ու նշում ներկայացնելու ժամկետը:

«Մանկավարժ»-ում կամ «Մանկավարժ»-ով ձևավորվեցին գրական-լրագրողական իմ հակումները: Այստեղ իմ սկիզբն էր, և այսօր, կես դար անց, հայտնում եմ երախտագիտությունս:

Ավանդույթները շատ էին, և շատ հաճելի կլիներ, եթե դրանք պահպանված ու լրացված լինեին:

Խոստովանում եմ, որ ինչին հասել եմ իմ աշխատանքային ու անձնական կյանքում, պարտական եմ ի՛մ Մայր ԲՈՒՀ-ին, իմ՝ մասնագիտական ու մարդկային վեհ արժանիքներ ունեցող դասախոսներին, այն ջերմ ու մտավոր մթնոլորտին, որ տիրում էր դասաժամերին, դասամիջոցներին, մշակութային քննարկումներում ու բանավեճերում:

Մայրենի լեզուն ու գրականությունը մեզ համար բարձրարժեք սրբություն էր, և մենք դպրոց էինք մտնում սերունդներ կրթելու ա՛յդ գիտակցությամբ, ա՛յդ սկզբունքով, սիրով:

Իմ տարեկիցներն ուղիղ կես դար մնացին դպրոցի ու մանկավարժության նվիրյալներ, իսկ ես, ավարտելուց 13 տարի անց, դարձա հեռուստալրագրող, հրապարակախոս, բանաստեղծ: Բանաստեղծական 4 ծավալուն ժողովածու եմ հրապարակել, 1 հոդվածագիրք: Իմ ստեղծագործական կյանքը շարունակվում է, և այդ կյանքի համար ես պարտական եմ Մանկավարժական ինստիտուտիս, դասախոսներիս, նաև «Մանկավարժ» թերթին՝ իմ՝ սկսնակիս, բանաստեղծություններն ու հոդվածները տպագրելու համար:

Իմ մեկդարյա կրթօջախին մաղթում եմ երկարակեցություն, այնքան, որքան ապրելու և հարատևելու է մեր ընտրյալ հայ ազգը, որովհետև դպրոցն է ազգիս հարատևման ու արարման ոգին միշտ վառ պահելու: Մաղթում եմ նաև, որ յուրացնեն ու փոխանցեն մի շատ կարևոր մասնագիտություն ևս: Այն կոչվում է Հայրենասիրություն: Հայրենասիրություն՝ պատմության և իրականության ճշգրիտ մատուցմամբ, Հայրենասիրություն՝ Մայրենի լեզվի, քրիստոնյա հավատքի, մշակույթի, Ազգային արժեքների ու ավանդույթների հանդեպ՝ տիրոջ, սիրո ու հարգանքի, հպարտության զգացումներով:

Հ.Գ. Բանասիրական ֆակուլտետում իմ ուսումնառության տարիների Գրական ստուդիայի շատ սաներ համալրեցին արձակագիր-բանաստեղծների շարքերը՝ Ֆելիքս Պետրոսյան, Սուսաննա Հովհաննիսյան, Հակոբ Մովսես, Վրեժ Սարուխանյան, Ջուլիետա Ասատրյան, Ռաֆիկ Մարգարյան, Արթուր Բունիաթյան, Սերգո Կարեյան, Մաքսիմ Ոսկանյան, Հովիկ Սարոյան, Նովիկ Դարբինյան, Մելանյա Պետրոսյան… Ցուցակս ամբողջական չէ:

Վստահ եմ, որ Մանկավարժական համալսարանը բազում, բազմաթիվ, անհամար և բոլոր մասնագիտությունների գծով շրջանավարտներ ունի և դեռ ունենալու է, որոնցով հպարտանալու իրավունք ունի և դեռ ունենալու է:

Ժաննա ՂՈՀԻԿՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ

ԼՐԱՀՈՍ

«Մանկավարժության արդի հիմնախնդիրներ, լուծումներ»

Համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված գիտաժողովները շարունակում են հագեցած պահել բուհի հոբելյանական մթնոլորտը:

Մանկավարժության ամբիոնը մայիսի 12-ին կազմակերպել էր «Մանկավարժության արդի հիմնախնդիրներ, լուծումներ» խորագրով ուսանող-դասախոս համատեղ գիտաժողով:



Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին, մանկավարժության հիմնախնդիրների մասին խոսեցին ու մերօրյա մանկավարժի մոդելը ձևակերպեցին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը և Մանկավարժության ամբիոնի վարիչ Սիդա Թոփուզյանը: Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը հաճելիորեն արձանագրեց զեկուցումների թեմատիկ հնչեղությունն ու արդիականությունը, իսկ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Ռուզաննա Պետրոսյանն ակտիվ և արդյունավետ ընթացք մաղթեց գիտաժողովին:

Պրոֆեսոր Ա. Թոփուզյանն արժևորեց բուհի մեկդարյա պատմությունն ու առաքելությունը՝ երկրի անվտանգության և հզորացման գործում, իսկ գիտաժողովը ուսանողների համար համարեց փորձ և փորձառություն բակալավրական և մագիստրոսական թեզերը պաշտպանելուց առաջ:

Համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը նախ իր երախտիքի խոսքն ուղղեց մանկավարժության ոլորտի մասնագետներին՝ գլոբալացման պայմաններում ազգային մանկավարժության ավանդույթները պահպանելու և փոխանցելու համար, ապա անդրադարձավ մերօրյա ուսուցչի՝ հասարակության կողմից սոցիալական ընկալման խնդիրներին:

Դիմելով ուսանողներին՝ ռեկտորն ասաց, որ նրանց հետագա գործունեությամբ է պայմանավորվելու նոր ժամանակների ուսուցչի կերպարի կերտումն ու արժևորումը, և հորդորեց՝ հասկանալ՝ ով է մեր ժամանակների իրենց հերոսը:

Գիտաժողովի զեկուցումները բազմաթիվ էին ու բազմազան. երեք մասնախմբերում ուսանողները դասախոսների հետ վեր հանեցին մանկավարժության ոլորտի տարբեր խնդիրներ և առաջարկեցին լուծումներ:

100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակին ընդառաջ Ռուսաստանում Հայաստանի դեսպանությանը կից «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում անցկացվեցին բաց դասընթացներ՝ նվիրված կրթօջախին և հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանին: Աշակերտները ծանոթացան մեծ գրողի կենսագրությանն ու թողած ժառանգությանը, Երևան քաղաքի Խ. Աբովյանի երկու հուշարձանների, համանուն փողոցի, քաղաքի և, իհարկե, ՀՊՄՀ պատմությանը:

Արդեն երկար տարիներ «Վերածնունդ» դպրոցն արդյունավետ համագործակցում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ: Մասնավորապես, դպրոցի ուսումնական ծրագրերի համապարփակ վերլուծության և պարբերական բարելավման նպատակով տեղի են ունենում խորհրդատվական հանդիպումներ համալսարանի Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ:

Կարևորում ենք 2018 թ. կնքված հուշագիրը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի N 57 հիմնական դպրոցի հետ, որի շրջանակում իրականացվում է փորձի փոխանակում:

Ընդգծենք, որ «Վերածնունդ» դպրոցի ուսուցչական համակազմը մասնակցում է սփյուռքի հայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրերին, որոնք հաջողությամբ իրականացվում են վերոհիշյալ ուսումնական հաստատությունում:

Նշենք նաև, որ Մանկավարժական համալսարանի ուսանողներին հնարավորություն է ընձեռվում պրակտիկան անցնել «Վերածնունդ» դպրոցում:

Սիրո և ակնածանքի դրսևորումներով...

Բանասիրական կրթությունն ու ֆակուլտետն առհասարակ ուրույն դեր ունեն, հատկապես երբ ուսանողների մի վառ ընտրանի մշտապես բարձր է պահում իր նախընտրած մասնագիտության նշաձողը՝ որպես հայ գրականության ու լեզվի մշտարթուն պահապան ու փոխանցող, օրինակ դառնալով ամենօրյա ջանադիր կրթությամբ ու կեցվածքով:

Ուսանողական հերթական գիտաժողովը գրավեց խորիմաստ ու գրավիչ զեկուցումներով, ուսանողների գրագետ ու կիրթ մտածողությամբ և խոսքով, գրական մեծությունների ստեղծագործությունների հանդեպ սիրո և ակնածանքի անթաքույց դրսևորումներով:

«Դեպի համալսարանի 100-ամյակ» կարգախոսով և «Մանկավարժականի երախտավորները. գրողներ և գրականագետներ» խորագրով ուսանողական գիտաժողովն աչքի ընկավ ապագա բանասերների խորագետ զեկուցումներով ու բանասիրական կրթության հանդեպ մեծագույն պատասխանատվության գիտակցությամբ: Այն կազմակերպել էր Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը, որի վարիչ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը բացման խոսքում հստակորեն ձևակերպեց ամբիոնի առաքելությունը.«Գրական աշխարհի հետ հոգևոր տրոփով է կապված հարյուրամյա մեր համալսարանի երբեմնի գրականության ամբիոնը, գրեթե նույնքան՝ հարյուր տարվա մենաշնորհի իրավունքով: Այդ կապը տասնյակ տարիների մեջ թրծել են ֆակուլտետի ու ամբիոնի երախտավորները՝ բանաստեղծներ և արձակագիրներ, որոնք հենց այստեղ՝ մանկավարժականում են ստացել ստեղծագործական նկարագիր ու գրական ընկալումների ճանապարհի ուղեգիր...»:

Հենց նրանց էլ նվիրված էին ուսանողների զեկուցումները՝ Վաչե Պարտիզունու՝ Վահան Տերյանին գնահատելու վսեմ ձիրք ու գրչի վարպետին, Հրանտ Մաթևոսյանին՝ Լոռվա չքնաղ բնաշխարհի գրական անհատականությանը, Սուրեն Մուրադյան մանկագրին՝ բարի ու արևաշող ստեղծագործական աշխարհի յուրահատուկ ներկայացուցչին, Մկրտիչ Սարգսյանին՝ պատերազմական մտորումների անդրադարձով, Ռազմիկ Դավոյանի՝ ներքին մտահոգություններով ու ճակատագրի դառնության միջով քայլող պոեզիային, Հակոբ Մովսեսի բանաստեղծական աշխարհի յուրահատուկ արձագանքներին, Լիպարիտ Սարգսյանի՝ աշխարհի ցավով անհանգիստ ստեղծագործական տրոփյուններին, Երվանդ Պետրոսյանի հետաքրքիր գրական աշխարհին...

ՀՊՄՀ Բանասիրականի շրջանավարտներ, որոնք ոչ միայն կրթվել են այս հաստատության կամարների ներքո, այլև հետագիծ են թողել և ձեռագիր: Եվ ահա նրանց գրական տաղանդի շերտերն են պեղում ու նորովի բացահայտում նույնքան տաղանդավոր ուսանողները՝ Տաթև Թամրազյանը (3-րդ կուրս), Արևիկ Գոմցյանը(4-րդ կուրս), Նարե Հովհաննիսյանը (4-րդ կուրս), Սյուզաննա Արաբաջյանը (1-ին կուրս), Աննա Սարգսյանը (հայցորդ), Անի Անտոնյանը (4-րդ կուրս), Հայկանդուխտ Մարգարյանը (2-րդ կուրս), Աննա Կոստանյանը (4-րդ կուրս): Զեկուցումներն ամբողջանում են ուսանողներ Մերի Առաքելյանի, Աստղիկ Բաղդասարյանի, Լիլիթ Վարդանյանի, Սոֆյա Համբարյանի բանաստեղծական հոգեթով ասմունքով:

Գիտաժողովի բացման ելույթներում համալսարանի գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանը և ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը արժևորեցին բուհը և նրա տարեգրությունը կերտած անվանի դասախոսների և ուսանողների՝ տարիների տքնանքն ու վաստակը:

«Մենք ամեն օր պեղում ենք հարյուրամյա համալսարանի պատմությունը և նոր փաստեր հայտնաբերում»,- ասաց հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյանը: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը փաստեց. «Մենք հարյուրամյա ճանապարհը չենք համարում եզրագիծ, այլ շարունակում ենք»: «Այսօր մեր ֆակուլտետը նոր դեմքով ու դիմագծով է ներկայանում հանրությանը, և մեզ համար առաջնայինը ուսանողի գիտական ատաղձն է»,- վստահեցրեց բանասիրական գիտությունների դոկտոր Աշոտ Գալստյանը:

Ելույթ ունեցողները փաստեցին՝ զեկուցումների թեմաներն ունեն ժամանակակից հնչեղություն, որ իրենք հավատում և աջակցում են ուսանողների ստեղծագործական մտքի երևակայական թռիչքներին...

Գիտաժողովի հյուր, ֆակուլտետի շրջանավարտ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Հակոբ Մովսեսը հուզված էր և ոգևորված: Լսելով ուսանողներին՝ նա ասաց.«Հուզմունքով ոտք դրեցի ուսումնական հաստատության շեմին, որն ավարտել եմ 50 տարի առաջ, և նկատեցի՝ այն ոգին, ոգևորությունը և հետաքրքրությունները, որ կային, պահպանվել է: Այսօրվա Հայաստանի համար ավելի կարևոր, պատասխանատու և պետականաստեղծ մասնագիտություն, քան մանկավարժությունը, գոյություն չունի: Մանկավարժությունը կարող է ապահովել մեր պետության բոլոր հիմքերը: Այս իմաստով ես ուրախ եմ, որ մանկավարժության սիրտը բաբախում է: Մնում է, որ ողջախոհությունն օգնի պահպանել բուհի առանձնահատուկ և առանձնաշնորհյալ կարգավիճակը»:

Օրվա խորհուրդն ու տպավորություններն էլ ավելի ամբողջացրին ՀՊՄՀ հիմնական դպրոցի ուսուցչուհի Ազնիվ Բարեղամյանի սաները՝ կատարելով Սուրեն Մուրադյանի խոսքերով գրված «Բարության ծառը» երգը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԱՎԱԳՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Բանասիրական ֆակուլտետը հիմնադրման օրվանից մեր հայրենիքի համար սրբազան գործունեություն է իրականացնում՝ իր հյուրընկալ պատերի ներքո պատրաստելով հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ: Այստեղ սովորող յուրաքանչյուր ուսանող ստանում է ոչ միայն հիմնարար գիտելիքներ մայրենի լեզվից և հայ գրականությունից, այլև ձեռք է բերում կարողությունների, հմտությունների մի ամբողջական պաշար, որը պետք է յուրաքանչյուր անհատի՝ հետագա կենսագործունեությունը ճիշտ կազմակերպելու և հասարակության մեջ ինքնադրսևորվելու համար: Կարող եմ անձամբ իմ օրինակով փաստել, որ բանասիրական ֆակուլտետում անցկացրած ամեն մի րոպեն և՛ որպես ուսանող, այժմ էլ որպես աշխատակից, շրջապատված եմ մարդկային ամենամեծ արժանիքներն ունեցող և հոգատարության, նվիրվածության ու սիրո մարմնացումն իրենց մեջ կրող վառ անհատականություններով:

Ֆակուլտետում մենք նաև հայրենասիրության ու մարդասիրություն դասեր ենք առնում: Դասախոսությունների և տարբեր զրույցների ընթացքում մեր ավագները նյութը համեմում են այնպիսի պատմություններով և օրինակներով, որոնք հետաքրքիր են և ճանաչողական: Իր բազմաթիվ ճանապարհորդությունների մասին գրավիչ պատմություններով է դասը համեմում պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը՝ աշխարհի տարբեր պետությունների պատմամշակութային, գրական– գեղարվեստական առանձնահատկությունները և ավանդույթները մատուցելով յուրովի: Նրա կնոջական և մայրական խորհուրդները, հոգատար վերաբերմունքը, ընդսմին խստությունն ու պահանջկոտությունը յուրահատուկ խթան են ուսանողների համար՝ սովորելու և հար կատարելագործվելու: «Վաղվա գործը արդեն երեկ արած պետք է լինեիք»,-իր ուսանողներին պարտաճանաչության է մղում տիկին Դոլուխանյանը՝ ժպիտով մատուցելով միջնադարյան գրականության գոհարները:

Հայ նոր և նորագույն գրականության մասին ուսանողները գիտելիքներ են ստանում մեր լավագույն գրողների և բանաստեղծների հետ շփումներ ունեցած գրականագետներից: Պրոֆեսորներ Ս. Դանիելյանը, Մ. Գիլավյանը, ամբիոնի մյուս դասախոսները որևէ հեղինակի մասին խոսելիս չեն մոռանում նրանց հետ ունեցած հետաքրքիր հանդիպումների մասին հուշերը՝ մեր գրականության մեծերին ներկայացնելով նաև հուշային դիմապատկերներով:

Լեզվաբանության, գրաբարագիտության, ժամանակակից հայերենի լավագույն մասնագետներն են աշխատում բանասիրական ֆակուլտետում, որոնք, պրոֆեսոր Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ իրենց սաներին են փոխանցում այս դժվարին ոլորտի նրբությունները:

Գիտակրթական գործունեությունից զատ մենք կանգնում ենք նաև հայրենյաց պաշտպանության դիրքերում: Երդվյալ ուսուցիչը նաև զինվոր է: Ավագների օրինակը մեզ ուղենիշ է:

Հովհաննես ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի դեկանատի մասնագետ

ԱՂՈԹՔԻ ԼԵԶՈՒՆ

Հաջողության հասնել ձգտում են բոլորը. մեկը իմաստուն խորհրդատու է դարձնում ուրիշների փորձը, մյուսը փորձում է գնալ չտրորված ճանապարհով: Իսկ ո՞րն է իմ ուսումնառության հաջողության գաղտնիքը: Առաջին հերթին այն, որ ամեն ինչ արել եմ ինքնաբուխ՝ հավատարիմ մնալով իմ կերպարին, ունկնդիր լինելով սրտիս ձայնին: Հենց սրտիս ձայնն էլ ինձ բերել է Մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետ: Խոստովանում եմ՝ հեշտ չի եղել ընտրությունը: Հետաքրքրություններիս շրջանակը մեծ էր. տարբեր մասնագիտություններ գրավում էին ինձ: Միտքս փորձում էր ինձ ուղղորդել այլ ուղղությամբ, գողանալ սրտիս խորքում ծվարած ամենաթանկը՝ մայրենիի նկատմամբ տածած անհագ սերը, բայց չկարողացավ: Մեր ոսկեղենիկ լեզուն ես իմ մեջ էի առել իբրև աստվածային երաժշտություն, որից մարմին էին առնում բոլոր երազանքներս: Իմ հոգին էր մեր լեզվի մեջ, իմ սերը, հավատն ու հույսը: Ես հասկացա, որ ինչ մասնագիտություն էլ ընտրեմ, ուր էլ գնամ, պետք է գնամ ամբողջ սրտով:

Հավատացի սրտիս ձայնին ու եկա: Հենց սա էլ դարձավ իմ հաջողության գաղտնիքը: Համոզված եմ՝ հաջողություն է բերում միայն այն գործը, որը սիրով ես անում: Առաջին օրերից իսկ ինձ պարուրեց մեր արքայական լեզվի գաղտնարանները բացելու, բառերի կախարդական աշխարհը թափանցելու, խոսքարվեստի հմայքը վայելելու բերկրանքը: Ես հայտնվել էի մի տաք օջախում, ուր կրակ կար, որ ինձ ոգևորում էր, և այդ կրակը վառ էին պահում բանասիրականի դեկանատը, հայոց լեզվի ու գրականության ամբիոնները: Այդ կրակը վառ էին պահում բանիմաց, գիտելիքների խոր պաշարով զինված դասախոսները, որոնց վստահորեն կարող եմ համարել մեր ֆակուլտետի սիրտը: Սխալված չեմ լինի, եթե ասեմ նաև, որ բանասիրական ֆակուլտետն էլ Մանկավարժական համալսարանի սիրտն է, քանի որ այստեղ է իրեղեն բովանդակություն ստանում մեր գոյապահպանման հիմքը՝ մեր լեզուն, այստեղ են արժևորվում ու ինքնատիպ գնահատական ստանում մեր գրականության մեծերը:

Ես շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր ինձ գիտելիքներ են հաղորդել, հուսադրել են, հավատ ներշնչել ու ճիշտ ուղղություն տվել: Միշտ խորացրել եմ գիտելիքներս, երբեք չեմ կարողացել մակերեսային մոտեցում հանդես բերել անգամ ոչ մասնագիտական առարկաների նկատմամբ: Ինչ վերաբերում է լեզվին, ամեն բառ ու բառակապակցություն, ամեն նախադասություն ու խոսք փորձել եմ խոր վերլուծության ենթարկել, ինձ համար ոչ մի հարցական չթողնել, կատարել հետազոտական աշխատանք՝ քննարկելով իմ մոտեցումները սիրելի դասախոսներիս հետ:

Ինձ միշտ հիացրել է մեր լեզվի ճկունությունը, բարդությունն ու խորությունը: Վարպետի՝ Իսահակյանի խոսքերն են խռովել հոգիս. «Մեր լեզուն բարձր լեռներից ու խորունկ ձորերից ծնած լեզու է, բարձունքների ու խորությունների լեզու»: Այո՛, հրաշք է մեր լեզուն, և յուրաքանչյուր հայ պետք է խորությամբ իմանա «Աղոթքի լեզու» համարվող հայերենը ու նրանով ստեղծված գրականությունը: Սա ես իմ սրբազան պարտքն եմ համարում:

Եթե հասել եմ հաջողության, ապա պարտական եմ լեզվի ու գրականության նկատմամբ տածած իմ մեծ սիրուն: Պարտական եմ բանասիրական ֆակուլտետին և նրա այն հրաշալի դասախոսներին, որոնք կրկնապատկել են այդ սերը, իմ առջև սփռել մեր լեզվի ու գրականության բոլոր գանձերը, ուղղորդել ու գնահատել ինձ, սովորեցրել հավատալ սեփական ուժերիս: Հաջողության հասնելու համար ինձ օգնել են նպատակասլացությունը, համառությունն ու հաստատակամությունը: Միշտ լսել եմ ներքին ձայնիս, որն ինքնաքննադատության պահերին ականջիս շշնջացել է. «Մի՛ թերագնահատիր ուժերդ, վստահ առաջ քայլի՛ր»: Եվ ես, երբեք չբավարարվելով ձեռք բերածով, ձգտելով հասնել ավելիին, փորձում եմ հարթել ինքնահաստատման իմ ճանապարհը:

Սիրելի՛ դիմորդ, այդ ճանապարհը նաև քո առջև է: Հիշի՛ր, որ ամենաերկար ճանապարհն անգամ սկսվում է առաջին քայլից: Լսի՛ր սրտիդ ձայնը, արա՛ այդ քայլը, արի՛ բանասիրական ֆակուլտետ, և քո հաջողությունը երաշխավորված է:

Սուսաննա ԹԱՄԱՉՅԱՆ
Մագիստրոս, 2-րդ կուրս

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ՏՈՒՆՆ Է ՀԱՅՈՒՆ...

Հայաստանը լեռների և անտառների մեջ ծվարած գողտրիկ աշխարհ է, մենք դարեր շարունակ մաքառել ենք օտար զավթիչների դեմ: Հաճախ ենք սայթաքել, սակայն երբեք ծնկի չենք իջել մեր լեզվի և նրանով պայմանավորված միասնականության շնորհիվ:

Ես Մերին եմ. բանասիրություն տանող ուղին անցնելու համար ընտրել եմ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Նպատակին հասնելու գաղափարն ինձ քաղաքամայր է բերել Տավուշի մարզից: Ֆակուլտետում բոլորը գիտեն, որ ես սահմանապահ գյուղից եմ, հայրս դիրքերում է և պաշտպանում է մեր գյուղը, բայց քչերը գիտեն, որ հենց այդ հանգամանքն է ինձ բերել այս կրթօջախ: Սահմանին, որտեղ որոշվում է վաղվա լինել-չլինելու հարցը, հայու ոգին ըմբոստանում է և ցանկանում արարել, ստեղծել, շարունակել այն սուրբ գործը, որն սկսել է Մեծ ուսուցիչը՝ Մ. Մաշտոցը, և որի ժառանգն է դարձել Խ. Աբովյանը, իսկ այսօր՝ ես ու իմ ընկերները:

Մայր ֆակուլտետում սովորելը հպարտության զգացումից զատ պարտավորեցնող է, որովհետև մեզ է վստահված պահպանել մայրենիի անմար ջահը. զլանալ այդ գործում, ասել թե կորցնել հող հայրենին:

Բուհում ուսանած երեք տարիները խոր հետք են թողել իմ հոգեկերտվածքի ձևավորման գործում: Սովորել ենք սովորել. տարօրինակ հնչող այս արտահայտությունն իր մեջ խոր բովանդակություն ունի: Տարիների ընթացքում հասցրել եմ մասնակցել մանկավարժական պրակտիկայի երկու շրջափուլերի՝ դասավանդելով Հայաստանի լավագույն դպրոցներում: Դպրոցի դռները յուրաքանչյուր նվիրյալ ուսանողի համար դեպի երազանք տանող հեքիաթային աշխարհ են թվում. այնտեղ են ծնվում իսկական հերոսներն ու քաջազունները: Այս ճանապարհը միայնակ հաղթահարելը անկարելի կլիներ. մեր թիկունքում կանգնած է մի հզոր ընտանիք:

-Մանկավարժ լինելու համար միայն գիտելիքի գերազանց իմացությունը բավ չէ: Մանկավարժը պետք է կարողանա համատեղել մի շարք մասնագիտություններ՝ հոգեբան, դերասան, բժիշկ, և այս ամենով հանդերձ պիտի շարունակի մնալ բարեկիրթ և աջակցող անձ,-մեզ հորդորում է բանասիրական ֆակուլտետի դեկան պարոն Գալստյանը:

Ես ականջալուր եմ իմ ուսուցչի խորհրդին...

Մերի ԱՌԱՔԵԼՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի
ուսանողական խորհրդի նախագահ

Մերօրը լցվեց հազարգույներով՝ մարդկային, հոգևոր, ճանաչումի...

Գնացել էինք Հառիճ: Չէինք եղել այս սրբավայրում: Թաց անձրև էր մաղում: Մտանք Ս. Գրիգոր Լուսավորիչ: 7-րդ դար է թվագրվում: Հայր Ղևոնդը օրհնեց բոլորիս և քարոզ խոսեց: Աշակերտների ծորուն երգը տարածվեց վանքում, գնաց դիպավ Այագյազի փեշերին:

Ուխտ կապեցինք և մոմ վառեցինք: Ցուրտ էր ներսում: Հայր սուրբը հրավիրեց ակրատի. կանայք համեղ սուրճ մատուցեցին՝ խնկից պատրաստված: Տեր հոր տղան՝ Հովհաննեսը, «Մոկաց Միրզան» երգեց: Բանասեր ուսանողները Իսահակյան արտասանեցին, Հայդուկի երգերից էին ընտրել:

Երկար խոսեցինք Հայր սուրբի հետ: Իմաստուն մտքեր էր արտահայտում:

Հայրենի ուսուցչուհին՝ տիկին Սիմոնյանն էլ խառնվեց զրույցին: Բանասիրականի ուսանողներս կլանված լսում էինք:

Դրախտային խաղաղություն էր բուրում Հառիճում: Մոգական է այստեղ ամեն բան: Մենք զգացինք Ա. Իսահակյանի և Կոմիտասի շունչը: Մարդ մի պահ կտրվում է աշխարհից և միաձուլվում հոգևորի և մշակութայինի հետ:

...Հետո մեզ ցույց տվեցին ընծայարանի ուսումնական և ննջարանային հատվածը:

Վարորդը շտապեցնում էր: Պիտի ժամը 18-ին հասնեինք Երևան: Մեր օրը լցվեց հազար գույներով՝ մարդկային, հոգևոր, ճանաչումի...

Հետդարձին ավելի լուռ էինք:

Աննա ԴԱՎԹՅԱՆ
Մագիստրոս

ՀՈՒՇԵՐԻ ԹԵՎՈՎ

Ես արդեն հատել եմ կյանքիս լավագույն կեսը, և ժամանակն է, որ երբեմն-երբեմն գնամ հուշերիս հետևից, վերապրեմ անցյալի լավ ու վատ օրերը, որոնք այնքա՜ն քաղցր են, որովհետև արդեն անդառնալի անցյալ են: Ունեցել եմ ձեռքբերումներ ու կորուստներ, վերելքներ ու անկումներ և կյանքս ապրել եմ այնքանով, ինչքանով ինձ երջանիկ եմ զգացել: ...Կյանքիս տաք հուշերն ինձ տանում են ուսանողական տարիներ՝ 1985-1991 թթ.: Այս թվականները հատուկ նշեցի, քանի որ կապված են հայ ժողովրդի ծանր ու հերոսական տարիների հետ: Այդ տարիներն ինձ տանում են իմ սիրելի բուհ՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մայրենի լեզվի և գրականության ֆակուլտետ: Հոր տան նման հաճախ եմ այցելում Մանկավարժական, և ամեն անգամ հիշողությանս կծիկը բացվում է, և դեմս են հառնում այնպիսի հզոր անուններ, ինչպիսիք են՝ Վ. Քոսյան ու Դ. Նազարյան, Ս. Արզումանյան ու Հ. Ադամյան՝ երախտավորներ հայոց բառի, մտքի ու խոսքի...

Այժմ էլ ուսանողի երկյուղածությամբ եմ մոտենում վեհաշուք տիկին Ա. Դոլուխանյանին, որն ինձ համար խելացի ու վեհ հայ տիկնոջ կատարելատիպ է: Ուսանողի ամոթխածությամբ եմ վերաբերվում պրոֆեսոր Ս. Դանիելյանին, սիրով ամբարում նրա համարձակ մտքերն ու մոտեցումները, իսկ պրոֆեսոր Է. Մկրտչյանը ինձ համար մնացել է հզոր ու առնական արցախցու տիպար, խիստ ու պահանջկոտ դասախոս: Շնորհակալ եմ բոլորին, շնորհակալ է ի՛մ սերունդը... Երկրաշարժի, անկախության, Ղարաբաղյան հերոսական շարժման այդ ծանր տարիներին չնահանջեցինք, քանզի մեր դասախոսները մեզ սատար կանգնեցին և օգնեցին՝ հասկանալու՝ ինչ է հայրենիքը, ու մենք պատվով դուրս եկանք այդ թնջուկից: Հայոց աշխարհի և Սփյուռքի տարբեր անկյուններում դարձանք հույսի ու լույսի գիտելիքներ բաշխող հայրենասեր ուսուցիչներ:

...Այս աշխարհում ես մենակ չեմ, ինձ հետ են իմ կուրսեցիները, ինձ հետ են իմ աշակերտները: Ամեն տարի հավաքվում ենք ու այցելում մեզ համար հարազատ դարձած ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետ՝ երրորդ հարկ: Մտնում ենք լսարան, նստում մեր տեղերում ու վերապրում ենք անցյալի հուշերը: Շատերս տատիկներ ենք արդեն ու հպարտանում ենք մեր թոռնիկներով: Հոգեպես ջերմացած դուրս ենք գալիս ուսանողի թեթևությամբ՝ հաջորդ տարի հանդիպելու անհագ ցանկությամբ:

Շնորհավո՜ր տոնդ, Մանկավարժական մայր բուհ:

Օլգա ԴԱՎԹՅԱՆ
Վարդենիկի կրթահամալիրի ուսուցչուհի,
բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 18.05.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ